ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Մ.Թ.Ա. VI – IV ԴԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Բնակավայրեր - ամրոցներ

Հայաստանի մ.թ.ա. VI – IV դարերի բնակավայրերի ուսումնասիրությունը ընթացել է անհամաչափ: Մինչ այժմ պեղված բնակավայրերի մեծ մասը բաժին է ընկնում Արարատյան դաշտավայրին և հյուսիս-արևելյան շրջաններին, իսկ մյուս շրջաններից հայտնի են հատ ու կենտ բնակավայրեր:

Արարատյան դաշտավայրի ամենահետաքրքիր հուշարձաններից է *ՄՈՒԽԱՆՆԱԹ ԹԱՓԱՆ*: Այն գտնվում է Երևան քաղաքի հարավային մասում, երկաթուղային կայարանի մոտ, 5600 քառ. մետր տարածություն զբաղեցնող հարթ մակերեսով բլրի վրա, որի բարձրությունը ծովի մակերևույթից 984,5մ է: Առաջանալով մ.թ.ա. III հազարամյակի վերջում, բնակավայրն աննշան ընդմիջումներով գոյատևել է մինչև միջնադար (5, էջ 258 և հաջորդ): Այստեղից հայտնաբերվել են նաև անտիկ դարաշրջանին վերաբերող նյութեր: Դրանք ձեռք են բերվել վերին շերտերի և պարսպի տակ բացված հելենիստական ժամանակաշրջանով թվագրվող հիմնահողային և կարասային թաղումների պեղումների միջոցին: Անտիկ նյութերից առանձնացվեց գորշ, կարմիր և վարդաշագանակագույն սափորների, տարբեր թասերի, կճուճների և կարասների բեկորների մի խումբ, որոնք իրենց ձևերով և հարդարման հատկանիշներով վերաբերում են Հայաստանի մ.թ.ա. VI – IV դարերի մշակույթին: Այս նյութերը հնարավորություն են տալիս ենթադրելու, որ բնակավայրը պահպանել է իր գոյությունն ուրարտական պետության կործանումից հետո: Հավանաբար, որոշ վերակառուցումներով պահպանվել են բնակավայրը պաշտպանող պարիսպները, ինչպես հետուրարտական մի շարք բնակավայրերում: Իր շինարարական առանձնահատկություններով, թերևս այս ժամանակահատվածին է վերաբերում նաև հիմնական պարսպից արևմուտք բացված բնակելի շինությունը, որից մաքրվել է ուղղանկյուն մի սենյակ 2,3 x 4,3 մ ներքին չափերով: Նրա պատերը հատում են ստորին մշակութային շերտը: Մուտքը եղել է հարավարևմտյան անկյունում, որից երեք աստիճան տարել է բնակարանի ներսը: Արանից երևում է, որ շինությունների հատակները գետնի մակերեսից ցած են եղել, դրանցում ջերմության բավարար աստիճան ապահովելու համար: Կից ավերված սենյակում հայտնաբերվել է քարաշար օջախ (5, էջ 280): Այսպիսով, հին հայկական շրջանի Մուխաննաթ-թափան գրավել է ավելի վաղ դարաշրջանի շինարարական մնացորդներից առաջացած բլրի գագաթը, շրջափակված պարիսպներով, կառուցապատված ուղղանկյուն շինություններով: Պարսպից դուրս և նրա անմիջական հարևանությամբ կատարվել են թաղումներ, ինչպես ընդունված էր անտիկ դարաշրջանում:

ԿԱՐՄԻՐ ԲԵՐԴ ամրոց-բնակավայրը տեղադրված է Հրազդան գետի աջ ափին, Կարմիր բերդ (Թազաքենդ, Կիզիլ-Կալա, Գայա-խարաբա) դամբարանադաշտից մի փոքր ցած, կիրճի մեջ խրված կլորավուն հրվանդանի վրա: Բնակավայրը շրջապատված է պարիսպներով: Պարսպապատի ստորին շարքերը՝ շարված հսկայական քարաբեկորներից, վկայում են դրա կիկլոպյան ծագման մասին: Պեղումներով բացված են մինչև 0,7մ թանձրությամբ մշակութային շերտ ունեցող երկու ուղղանկյուն շինություններ: Նյութերը, բացառությամբ մի քանի խեցեղեն սև բեկորների, որոնք գտնվել են շենքի տուֆե ժայռահատակի ճեղքերից և վերաբերում են մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբներին, պատկանում են անտիկ և վաղ միջնադարին: Այս խեցեղենի մի մասը, շուրթերի ձևավորման, արտաքին մակերեսների մուգ շագանակագույն երանգի, փայլեցման, փորագիր գծային զարդամոտիվների օգտագործման և այլ հատկանիշներից ելնելով կարելի է վերագրել մ.թ.ա. VI – IV դդ.: Դրանք հիմնականում տնտեսական-խոհանոցային տեսակի անոթների բեկորներ են, որոնց զուգահեռները կան այդ դարաշրջանի բոլոր բնակավայրերում: Հայտնաբերված բազմաթիվ և բազմատեսակ աղորիքները վկայում են երկրագործության զարգացման նշանակալի աստիճան: Աղորիքների այս առատությունը և զենքի բացակայությունը

թույլ են տալիս բնակավայրը բնորոշելու որպես երկրագործական (10, աղ. XX, IX):

ԷՐԵԲՈՒՆԻ (Արին բերդ) ամրոցը տեղադրված է Երևանի հարավ-արևելյան ծայրամասում բարձրացող Արին բերդ բլրի վրա: Մ.թ.ա. 782թ. հիմնադրված ուրարտական այս ռազմա-վարչական և տնտեսական կարևոր կենտրոնի պեղումներով հայտնաբերված նյութերի ուսումնասիրման և շերտագրական դիտարկումների միջոցին առանձնացվել են շինարարական բնույթի վերափոխումներ. կառույցների վերանորոգումներ, նյութական մշակույթի մնացորդներ, որոնք թույլ տվեցին տարբերակել մշակութային երկու շրջան՝ ուրարտական և մ.թ.ա. VI – IVդդ.: Մ.թ.ա. VI – IVդդ. շինարարական գործունեության հետևանք են սյունազարդ դահլիճը (ապադանան), Հրո մեծ և փոքր տաճարները (173, էջ 34-98):

Սյունազարդ դահլիճը, իրեն կից սենյակներով, ներկայացնում է պալատական համալիր, որը ստացվել է ուրարտական Խալդի աստծուն նվիրված տաճարի վերակառուցումից: Տաճարի 12 սյուներով ձևավորված, արևելյան նախամուտքը, քննարկվող ժամանակաշրջանում ընդլայնվել, վերափոխվել է 30 սյունանոց դահլիճի, որը ծառայել է հանդիսությունների, տոնական արարողությունների համար: Դահլիճի պատերը պահպանվել են մինչև 4 մ բարձրությամբ: Դահլիճի հարավային պատի տակ բացվել է հում աղյուսից շարված 86 սմ բարձրությամբ զոհասեղան: Դրան երկու կողմից հարում է նույն նյութից կառուցված նստարանը, որը ձգվում է դահլիճի ողջ ներքին պարագծով: Եռաստիճան զոհասեղանն ունի հարթեցրած, ծեփածո մակերես, որի վրա պահպանվել էին մոխրի, ածուխի, իսկ կից պատի վրա՝ մրի հետքեր (173, էջ 60): Այստեղ ուրարտական պաշտամունքային համալիրը վեր է ածվել աշխարհիկի: Ճիշտ հակառակն է կատարվել ուրարտական պալատական համալիրի հետ: Փակվել են պալատական համալիրի կենտրոն հանդիսացող, սյունազարդ բակ մտնող բոլոր մուտքերը, հեռացվել սյունաշարերը, փայտյա կառույցները: Ստեղծվել է տաճարական նոր համալիր (17 x 19 մ չափերի) մեկուսացված բակով, Սուսի տաճարով (5,05 x 3,03 մ ներքին և 10,0 x 13,15 մ արտաքին չափերով), տաճարի առջև լայնակի դրված կառույցով և ներքին բաց բակով: Համալիրին որպես մուտք է ծառայել, հավանաբար տաճարի և մեկուսացված տարածությունը հյուսիսից սահմանափակող պատի միջև առաջացած բացվածքը: Ներքին բակ են մտել նույն գծի վրա բացված երկու մուտքով (173, էջ 34-35, էջ 68-94):

Տաճարն ուղղանկյուն, հաստահեղույս շինություն է, խուլ պատերով, մուտքը՝ արևելյան կողմից: Արևմտյան պատի հիմքերի առաջ, ինտերյերի լայնքով պահպանվել են նաև այլ հիմքերի մնացորդներ, որը մեկնաբանվում է որպես նվիրատվությունների սեղան: Սրա շրջապատից են հայտնաբերվել մ.թ.ա. VI – IVդդ, մշակույթին վերաբերող նյութերի մեծ մասը (16, էջ 104-105): Ներքին բակում, տաճարի դիմաց 1,2մ հեռավորության վրա բացված մույթը դրսից թաքցրել է տաճարում վառվող սրբազան կրակը: Մույթից դեպի կենտրոն դրված է եղել զոհասեղանը 0,7մ բարձրությամբ (կավե շաղախով շարված բազալտե քարերից): Եռաստիճան բազալտե մի քարի օգնությամբ բարձրացել են հասնելու զոհասեղանի հարթակին: Զոհասեղանի դիմաց, բակի հարավային պատի տակ հարմարեցված է 2մ երկարությամբ նստարան: Զոհասեղանի և նստարանի միջև ընկած տարածությունը ծածկված է բազալտե սալերով, այն դեպքում, երբ ողջ ներքին տարածքը սալած է փոքր գետաքարերով (173, էջ 30-35):

Երրորդ ճարտարապետական համալիրը բացվել է ուրարտական պալատական շենքի հարավ-արևելյան արտաքին պատին կից: Փոքր չափերի (արտաքին չափերը 12 x 9 մ) այդ համալիրը բաղկացած է երեք սենյակից, որոնցից մեկն ունի երկայնակի ուղղանկյուն, իսկ երկու փոքրերը՝ քառակուսի հատակագիծ: Տաճարի պատերը արտաքինից խուլ են և միայն մեծ սենյակի ներքին տարածքն է լուսավորվել հարավային կողմի դռան բացվածքից: Մեծ սենյակը արևելյան և հյուսիսային պատերի վրա ունի տարբեր չափերի, միանման երկկենտրոն կամարակապ որմնախորշեր: Դրանցում, սյունազարդ դահլիճի նմանությամբ, հարմարեցված են նստարաններ: Երկկենտրոն կամարակապ ծածկեր ունեն և տաճարի դռները, որոնք այդ կառուցվածքի ամենավաղ արտահայտությունն են Հայաստանում (173, էջ 98): Հյուսիս-արևմտյան փոքր սենյակի պատերն ավելի հաստ են, քանի որ այն ծառայել է որպես սրբազան կրակի պահպանման խուց: Պալատական, տաճարային ու տնտեսական այս շենքերի մերձակայքում, վերին շերտերից (0,5 – 0,6մ), հայտնաբերվել են նյութեր, որոնք օգնում են պատկերացում կազմելու էրեբունիի՝ աքեմենյան XVIII սատրապության կենտրոններից մեկի (56, էջ 53-71; 57, էջ 98-115) նյութական մշակույթի մասին: Դրանք են Սուսիի կամ

Հրո մեծ տաճարի ներսում 1956թ. գտնված, մ.թ.ա. V դարով թվագրվող, միլեթյան երկու արծաթյա դրամները, նույն տեղից գտնված եռանիստ, երկթև և եռաթև նետասլաքները, օղակներից կազմված երախճանը, տարբեր նյութերից պատրաստված և զանազան ձևերի ուլունքները, խեցեգործական բազմաթիվ նմուշները (15, էջ 94; 181, էջ 24; 57, էջ 113-114): Վերջապես, 1968թ. ամրոցից ոչ հեռու հայտնաբերված արծաթե բարձրարվեստ անոթների խումբը, որոնք բազամաթիվ զուգահեռ նյութերով, պատրաստման հնարներով ու ոճով վերաբերում են մ.թ.ա. VI – IV դարերին (71, էջ 143-157):

ԱՐՄԱՎԻՐ: Արարատյան դաշտի արևմտյան մասում, Արաքսի ձախ ափին, Արմավիր, Հայկավան, Նոր Արմավիր և Նալբանդյան գյուղերի միջև ձգվում է հրաբխային ծագում ունեցող բլուրների մի շարք, որոնցից ամենաբարձրը՝ Արմավիր բլուրը (Թափա դիբի) ունի 76 մ - բարձրություն և գագաթի 2 հա հարթ տարածություն: Բլուրը բնակեցված է եղել հնագույն ժամանակներից, որն ապացուցվում է թե՛ գրավոր աղբյուրներով, թե՛ հնագիտական պեղումներով: Մովսես Խորենացին հաղորդում է, որ Արարատյան դաշտավայրը բնակեցնելուց հետո, Հայկի սերունդները խորացել են դեպի հյուսիս-արևելք, իսկ Արամայիսը բնակավայր է կառուցել գետի ափին, բլրի վրա, կոչելով այն իր անունով՝ Արմավիր (51, Ա, ԺԲ): Եվ Դավթի սարից III հազարամյակի ու տարբեր դարաշրջանների դամբարանային նյութերը, ուրարտական արձանագրությունները, Արգիշտիխինիլիի ու Արմավիրի պեղումներն ապացուցում են հաղորդման ճշմարտացիությունը: Ըստ այդ վկայությունների, բլրաշարքն ուրարտացիների կողմից գրավվելուց հետո, մ.թ.ա. 776թ. Արգիշտի I հիմնադրել է իր քաղաքը երկու՝ արևելյան (Արմավիր) և արևմտյան (Դավթի սար) ամրոցներով: Քաղաքը պարսպապատելով, կառուցապատելով պալատական, պաշտամունքային, աշխարհիկ և տնտեսական բազմապիսի շինություններով, այն վեր է ածել վարչական, տնտեսական և պաշտամունքային նշանակալի կենտրոնի: Ա.թ.ա. VI դարի սկզբներին, ուրարտական պետականության անկումից հետո, արևելյան հատվածում կյանքը չի դադարել: Արմավիրը որպես պաշտամունքային կենտրոն (70, էջ 163; 207, էջ 93-97) և բնակավայր՝ պահպանել է իր նշանակությունը և մ.թ.ա. VI դարի վերջում դարձել վերականգնված հայկական թագավորության մայրաքաղաքը: Ուրարտական ամրոցն իր պաշտպանական հզոր կառույցներով, պալատական, տաճարային և աշխարհիկ շենքերով, ինչպես ցույց են տալիս պեղումները, կանգուն էր և հաջողությամբ օգտագործվում էր հելենիստական ժամանակաշրջանում (209, էջ 161-164): Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք կանգուն են եղել և օգտագործվել են նաև քննարկվող ժամանակաշրջանում: Վաղ հայկական մշակույթի նյութերն առանձնանում են շերտագրական, ձևաբանական և համեմատական քննության միջոցով: Դրանք հիմնականում խեցեղեն առարկաներ են, երկաթե նետասլաքներ, զարդեր, որոնք իրենց զուգահեռները գտնելով թե՛ Հայաստանի, թե՛ հարևան երկրների համաժամանակյա նյութերի մեջ, թվագրվում են մ.թ.ա. VI – IV դարերով:

ԿԻՐՈՎԱԿԱՆ - ՔՈՍԻ ԾՈՒԹԵՐ բնակավայրը գտնվում է բարձրադիր եռանկյունաձև հրվանդանի վրա, որը արևմուտքից եզերվում է Շլորկուտի ձորով, արևելքից՝ Հայդարբեկի հեղեղատով: Հարավից այն տասը դարավանդներից կազմված մի աստիճանաձև բարձունք է: 1960թ. շինարարական աշխատանքների ժամանակ այստեղ երևան են եկել մշակութային մնացորդներով հագեցած շերտեր: Հնագետ է.Խանզադյանի կատարած պեղումներից պարզվել է, որ հնավայրը բազմաշերտ է: Վերևից հաշված առաջին շերտը վերաբերում է ուշ ժամանակաշրջանին (21, էջ 77-79): Այստեղից ձեռք բերված նյութերը՝ հիմնականում խեցեղենը, ձևա-տիպաբանական հատկանիշներով, պատրաստման և հարդարման տեխնիկական տվյալներով համահունչ են մ.թ.ա. .ա. VI – IVդդ. խեցեգործությանը, որն իրավունք է տալիս հուշարձանի այս շերտը վերագրել քննարկվող դարաշրջանին:

ՓՈՔՐ ՇԱՀԼԱՄՍ բնակավայրը գտնվում է Դեբեդի աջ ափին, Այրում ավանի հյուսիսային ծայրամասում բարձրացող մի ժայռոտ ելուստի գագաթին, իշխելով Նոյեմբերյանից Այրում տանող ճանապարհի վրա: Այն 1,5 հա տարածությամբ կրկնում է ելուստի ուրվագիծը և ունի հավասարասրուն եռանկյան տեսք: Ելուստի հարավային լանջերը խիստ զառիթափ են և պաշտպանության կարիք չեն զգում, իսկ արևմտյանը՝ տեղ-տեղ լրացուցիչ ամրացված է 3,5 մ լայնք ունեցող պատերով: Արևելյան կողմը և հյուսիս-արևելյան անկյունը պաշտպանող պատերը լրիվ ոչնչացված են երկար տարիներ այստեղ գործող քարհանքի կողմից (աղ. 1, 1):

Բնակավայրն ուսումնասիրված է 13 հետախուզահորերի միջոցով: Բոլոր հետախուզահորերում, իսկ հինգերորդում հատկապես, հողի

մակերեսից մինչև 0,4մ խորության վրա բացվել է մ.թ.ա. VI – IVդդ. մշակույթի շերտը՝ խեցեղենի բնորոշ բեկորներով: Այդ մշակույթի թվագրմանը օգնում են հատկապես ներճկված պսակներով թասերի, ըմպանակների, սափորների բեկորները (109, էջ 95-96):

ՔԱՐԻ ԳԼՈՒԽ (Շահլամա III): Տեղադրված է դարձյալ Դեբեդի աջ ափին: Այն գրավում է երեք կողմերից խիստ զառիթափ լանջերով մի բարձունք (6,6հա), որը միայն չորրորդ կողմով է կապվում շրջապատի հետ: Բնակավայրի պարսպից պահպանվել են որոշ հատվածներ միայն (2,5 - 3մ լայնք): Հյուսիսային մասում լայնակի պատով առանձնացված է միջնաբերդը, որի պաշտպանության համար նրա արևելյան պատի վրա կառուցված է քառակող (4 x 4մ) մի աշտարակ: Բնակավայրն այժմ ծածկված է այգիներով և ուսումնասիրվել է միայն երկու հետախուզահորի միջոցով: Դրանց վերին շերտերում և վարելահողի միջից հավաքած նյութերում առկա է մ.թ.ա. VI – IVդդ. թվագրվող խեցեղեն, որը թույլ է տալիս ասելու, որ առաջին հազարամյակի սկզբին հիմնադրված բնակավայրը, որոշ ընդմիջումից հետո, վերաբնակեցվել է այդ դարերում (109, էջ 26, 96):

«ՀԱՌԹԱՆԱԿ» (Շահլամա II): Նույնպես տեղադրված է Դեբեդի աջ ափին տարածվող սարահարթի հարավային մասում, Քարի գլուխ ամրոցի դիմաց: Բնակավայրը երեք կողմից պաշտպանված է սարահարթի կտրուկ լանջերով, անպաշտպան է միայն հյուսիսային կողմից: Այն աչքի է ընկնում իր մեծ չափերով՝ զբաղեցնելով 4,5հա տարածություն: Բնակավայրն ամրացված է 3-4մ լայնությամբ պատերով, որոնք տեղ-տեղ պահպանվել են 2,5 - 3,0մ - բարձրությամբ: Պարիսպը գոտևորում է սարահարթը, կրկնելով նրա ուրվագիծը, հուշելով բնակավայրի ուղղանկյունաձև հատակագիծը: Պաշտպանությունն ուժեղացնելու համար արևելյան և արևմտյան պատերի կենտրոնական մասերում կառուցված են ուղղանկյուն աշտարակներ: Երեք մետր լայնությամբ մուտքը տեղադրված է հյուսիսային կողմում, որի պաշտպանության համար ևս կառուցված է մեծ աշտարակ: Բնակավայրը երկու լայնակի զուգահեռ պատերով բաժանված է հատվածների: Երրորդ հատվածում տեղադրված է միջնաբերդը: Ամրոցում և միջնաբերդում երևում են բնակարանների բազմաթիվ հետքեր (աղ. 1, 2): Ամրոցն ուսումնասիրվել է հետախուզահորերի միջոցով: Հայտնաբերված նյութական մշակույթը, հատկապես խեցեղենը՝ իր զուգահեռները գտնելով հյուսիս-արևելյան շրջանների համաժամանակյա բնակավայրերի նյութերում; թվագրվում է մ.թ.ա. VI – IV դարերով (109, էջ 96-98):

ԲԵՐԴԱՏԵՂ: Նոյեմբերյանի շրջկենտրոնից 2կմ հյուսիս-արևելք, առանձին ժայռոտ բարձունքի վրա տեղադրված ամրոցը, մյուսների նման, կրկնում է տեղանքի ուրվագիծը՝ կազմելով 4հա տարածությամբ անկանոն ուղղանկյուն: Ամրոցի պատերը վատ են պահպանված, երևում են հարավ-արևելյան կողմը պաշտպանող աշտարակները, որոնց միջև տեղադրված է եղել մուտքը: Պահպանվել են նաև պատերի առանձին անկյուններ, հավանաբար՝ որմնահեցերի հետքեր: Ամրոցի շրջակայքում երևացող բազմաթիվ շինությունների հետքերը հուշում են, որ բնակավայրը տարածված է եղել ամրոցի շուրջը, իսկ վերջինս խաղացել է միջնաբերդի դեր (109, էջ 250):

Բնակավայրից 200 մ հեռավորության վրա տարածվում են ֆելզիտի հանքերը, որտեղ սփռված է եղել բնակավայրի դամբարանադաշտը (54, էջ 259):

ՋԱՌԱՑՍՏԵՂ: Նոյեմբերյանի շրջանի Ջուջևան գյուղի հարավ-արևելյան ծայրամասում, Իջևան տանող ճանապարհից ձախ, բարձրանում է հարթ գագաթով մի բլուր, որն այժմ ծածկված է այգիներով: Այստեղ, վաղ բրոնզեդարյան բնակավայրի վերին շերտերից հայտնաբերվել են քննարկվող ժամանակաշրջանին վերաբերող նյութեր, որոնք թույլ են տալիս ասելու, որ այստեղ կյանքը մ.թ.ա. VI – IV դարերում վերակենդանացել է (109, էջ 154):

ԱՍՏՂԻ ԲԼՈՒՐ: Իջևանի շրջանի Ենոքավան գյուղի հյուսիս-արևելյան ծայրամասում, Աստղիբլուր կոչվող ժայռոտ տափարակի վրա տեղադրված է հզոր ամրոց-բնակավայրը: Այն զբաղեցնում է 2հա տարածություն և շրջափակված է 3մ լայնությամբ պարիսպներով, որոնք կազմված են անկյունավոր և բեկ գծերից: Արևմտյան, հյուսիսային և մասամբ հյուսիս-արևելյան կողմերից կառուցված է պարսպի երրորդ պատը, իսկ արևելյան մասում, երկրորդ և առաջին պատերի միջև, անց է կացված դրանց միացնող լայնակի պատ: Պատերը պահպանվել են մինչև 3մ բարձրությամբ: Հիմնական մուտքը հարավային կողմից է: Առաջին և երկրորդ պատերի միջով 90մ գնալուց հետո, 5 մետրանոց մի ներքին մուտքով միայն կարելի է մտնել բնակավայր: Այդպիսի մի մուտք էլ կա հյուսիսային կողմից, երկրորդ պատի մեջ (աղ. 1, 3): Պեղումների ժամանակ բացվել են տաճարային և նրան կից այլ շինություններ: Տա-

ճարը ուղղանկյունաձև է, տեղադրված է ամրոցի ամենաբարձր մասում, արևելք-արևմուտք առանցքի վրա: Այն ունի արտաքինից 15x9մ - չափեր, 9x3 ներքին տարածությամբ: Պատերը պահպանվել են 0,3 – 0,8մ բարձրությամբ, շարված են խոշոր քարերից, կավե շաղախով: Հարավ-արևմտյան պատը չի պահպանվել, որտեղ հավանաբար եղել է մուտքը: Դրա դիմաց, որոշ հեռավորության վրա նշմարվում են լայնակի դրված ինչ-որ պատի հետքեր՝ հավանաբար տաճարում վառվող կրակը դրսից թաքցնելու նպատակով շարված: Հանդիպակաց հյուսիս-արևելյան պատը ավելի հաստ է: Հատակը շարված է եղել ոչ մեծ քարե սալերով: Տաճարը լուսամուտ չի ունեցել և հավանաբար լուսավորվել է մշտավառ կրակով: Պեղումների ժամանակ բացահայտվել է երկու մշակութային շերտ: Առաջին շերտը թվագրվում է առաջին հազարամյակի սկզբով, իսկ երկրորդը՝ քննարկվող դարաշրջանով: Արտակարգ հարուստ է երկրորդ շերտը՝ թե՛ խեցեղեն, թե՛ մետաղյա առարկաներով (109, էջ 44): Այս նյութերի միջավայրում գտնվել է նաև երկու մանրակերտ: Մեկը պատկերում է երկհարկանի շինություն, կանգնած ցանկապատված կլոր բակի կենտրոնում, մյուսը՝ շատ փոքր չափերի մետաղյա միահարկ շենք: Երկուսն էլ ունեն եռանկյուն ճակտոն: Տաճարում հայտնաբերված նյութերի և մանրակերտերի ճարտարապետական առանձնահատկությունների միջոցով է բնորոշվում բացված շենքի, ինչպես նաև բնակավայրի պաշտամունքային բնույթը:

ԲԵՐԴԱՏԵՂ: Գտնվում է ենոքավան գյուղից 8 կմ հյուսիս-արևմուտք: Այն կառուցված է բարձր ժայռոտ բլրի վրա, որը երեք կողմից ունի խիստ կտրուկ լանջեր և միայն հարավ-արևելյան կողմից է քիչ թե շատ մատչելի: Գրավում է 1,5 հա տարածություն: Ամրոցը շրջապատված է 3 մ լայնություն ունեցող պարիսպներով: Հետագայում ամրոցի ընդարձակման հետևանքով արևելյան և հարավային կողմերից կառուցվել է ևս երկուական պարսպապատ: Ամրոցի մուտքն արևելյան կողմից է և անցնում է երեք պատերի միջով: Կենտրոնական մուտքն ամրացված է երկու հզոր որմնահեցերով (աղ. 1, 4): Պեղումներով բացվել են ուղղանկյուն հատակագծով երեք շինություններ, որոնց չափերն են՝ 3,30x7,50; 3,40x3,60 և 3,0x7,5մ: Սենյակների պատերի պահպանված բարձրությունը երբեմն հասնում է 0,8 մետրի, իսկ պատերի լայնությունը՝ 2,4–2,8 մետրի: Սենյակների հատակը բլրի ժայռն է, որի անհարթությունները հավասարեցված են տոփանված հողով: Նյութական մշակույթի շերտը թանձր չէ, ընդամենը 0,5– 0,7մ, որը բնորոշ է բոլոր միաշերտ նման հուշարձաններին: Շինություններից մեկը հիշեցնում է Աստղի բլուրի տաճարային շենքը: Այն կառուցված է ամրոցի կենտրոնական մասում բարձրացող ժայռոտ ելուստի վրա: Առջևում ունի հարթ, ազատ հրապարակ, ըստ երևույթին՝ ծիսական արարողություններին ծառայող: Շինության մեջ հայտնաբերված կոճանման, կոնաձև և կթխայաձև առարկաները, իրենց ուղղակի զուգահեռները գտնելով Աստղի բլուրի տաճարից գտնված համանման նյութերի մեջ, հաստատում են շենքի պաշտամունքային լինելը: Հայտնաբերված խեցեղենը, գործիքները և զենքերը, որոնք հայտնի են մ.թ.ա. VI–IVդդ., մյուս հուշարձաններից թույլ են տալիս Բերդատեղի գոյատևման ժամանակահատվածը վերագրելու այդ դարերին (109, էջ 49):

ԹՄԲԱԴԻՐ (Թմբի դիրք): Գտնվում է Իջևանի շրջանի Աչաջուր գյուղի հյուսիս-արևմտյան ծայրամասում: Այստեղ կտրուկ վեր բարձրացող ժայռի վրա, որի երկու կողմերից հոսում են անանուն փոքր գետակներ, հող լցնելով, արհեստականորեն ստեղծել են մեկ հա տարածությամբ հարթություն և կառուցապատել: Բլուրը եզրագծով շրջափակել են 3մ լայնությամբ պարսպով, որն արևելյան կողմից ունի չորս որմնահեց, իսկ արևմտյան կողմից բարձրանում է ժայռի ելուստը: Սուտքը տեղադրված է հարավային պարսպահատվածի կենտրոնական մասում և պաշտպանված է առջևում բարձրացող կիսաբոլոր պատով: Պեղումներով բացվել են պարսպապատի մի մասը, մի շարք շենքեր և հայտնաբերվել են խեցեղենի, մետաղե առարկաների և քարե գործիքների առատ մնացորդներ: Այս ամենը պատկերում է ոչ մեծ ամրոց-բնակավայրի կյանքը (աղ. 2, 2): Շինությունները հիմնականում բացվում են արևելյան հատվածում, իրար կից, և ինչպես ենթադրում է Ս.Եսայանը, ունեցել են ընդհանուր ծածկ (109, էջ 54-55): Պատերը շարված են անտաշ քարերով, ունեն 0,7–1,5մ լայնություն: Սենյակների ներքին չափերի տատանումները չնչին են, մեծ մասամբ 4x5 կամ 5x6մ են, միայն մի սենյակն ունի 6մ լայնություն և 9մ երկարություն: Սենյակների հատակները ցածր են պատերի հիմքերից: Բոլոր սենյակներում բացվել են տարբեր ձևերի՝ կոնաձև, գլանաձև, երկարաճիտք կոշիկի նմանությամբ տնտեսական հորեր: Դրանք ունեն տարբեր խորություններ, բերանները շարված են մանր գետաքարերով և ծածկված են կլոր սալաքարերով: Որպես կանոն հորերի կողքին կամ դիմացի պատի տակ կանգ-

նեցված են 0,8 – 1,0մ բարձրությամբ կարասներ: Սենյակներից մեկում և երկրորդ հետախուզահորում բացվել են պաշտամունքային օջախներ: Երկրորդ հետախուզական խրամատում բացված պաշտամունքային օջախի կողքին գտնվել է ցուլի քարե արձանիկ, քանդակված նստած դիրքով: Բնակավայրում հայտնաբերվել են կավե, բարձր կողերով, կլոր առարկայի բեկոր, շատ նման Աստղի բլուրի տաճարի կավե մանրակերտի ցանկապատին, կեռխաչերով հարդարված աղորիք, պաշտամունքային հացի հատիկն աղալու համար: Ժամանակաշրջանի տնտեսական կյանքի ուսումնասիրության համար հետաքրքիր են մանգաղների կայծքարե ներդիրների, քարե խոշոր բրիչի, կավե հալոցների, կաղապարների բեկորների գյուտերը: Գտնվել է եռաստիճան հատակով մեծ հոր, կավե սրածայր գլանաձև իր, որ նման է միջնադարյան խեցեղեն թրծելու վառարաններում կիրառվողներին, խեցեղեն թրծելու թոնիր: Հայտնաբերված խեցեղենը, չնայած որոշ արխայիկ ձևերին, և սկյութական եռանիստ ուշ տիպի նետասլաքը հնարավորություն են տալիս բնակավայրը թվագրելու մ.թ.ա. VI-V դարերով:

ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ: Սև քար և Աչաջուր գյուղերի միջև բարձրացող եռանկյունի ժայռոտ ելուստի վրա տեղադրված է 1,5հա տարածք ունեցող ամրոցը: Ելուստը հարավային և հարավարևելյան կողմերից պաշտպանված է զառիթափ լանջերով: Հյուսիսային՝ մատչելի կողմից կառուցված են զուգահեռ եռաշար, իսկ արևմտյան կողմից՝ միաշար պարիսպներ: Հյուսիսային կողմից ամրոցը դարավանդաձև իջնում է: Պարսպի պատերի լայնությունը 3մ է, մուտքը հյուսիսային կողմում է և ունի 6մ լայնություն: Ամրոցի մշակույթի ուսումնասիրման համար երկրորդ դարավանդում դրվել են հետախուզահորեր: Հայտնաբերվել է երեք մշակութային շերտ՝ մ.թ.ա. VII- VI դդ., անտիկ և միջնադարյան (109, էջ 41):

Անտիկ նյութերի մեջ առանձնանում է նաև մ.թ.ա. VI-IV դարերին բնորոշ խեցեղենը, որը թույլ է տալիս այն համարել Թմբադիրը պաշտպանող պահակակետային ամրոց:

ՍՈՒՐԲ ՍՐՎԱՆԵՍ (Հովհաննես): Թմբադիրի մյուս պաշտպանական ամրոցը տեղադրված է նրանից 3 կմ հյուսիս-արևմուտք, բարձր եռանկյունաձև ժայռոտ բլրի վրա: Այն ունի 1,6 հա տարածություն: Բլրի արևմտյան լանջերը խիստ կտրուկ են և անմատչելի, իսկ մյուս կողմերը պաշտպանված են միաշար, երկու մետրանոց պատերով: Սուտքը տեղադրված է եղել հյուսիսային անկյունում: Ողջ տարածքը լերկ ժայռեր են և նյութական մշակույթի հետքեր չկան: Ամրոցը ծառայել է որպես անասնանոց և պահակակետ (109, էջ 254):

ԲՈՒՂՈՒՐԻ ՔԱՐ: Գտնվում է Իջևանի շրջանի Աղղան գյուղից 3 կմ արևելք, բարձր ժայռի վրա: Ամրոցը պահակակետային է և փակում է Շամշադին գնացող լեռնային կիրճի մուտքերը: Ժայռն ունի հավասարասրուն եռանկյան տեսք: Այն երեք կողմից ունի կտրուկ իջնող լանջեր: Հյուսիսային կողմում ձգվում է 213մ երկարությամբ միաշարք պարիսպ, իսկ հարավային կողմում, որով իրականացվում է կապը շրջապատի հետ, կառուցված է երկշար պարիսպ: Այստեղ պահպանվել են իրար դիմաց տեղադրված 2-3մ լայնության երկու մուտքերը: Մակերեսից հավաքած խեցեղենը, որի մեջ գերակշռում են խոհանոցային տեսակները, երեքնուկաձև շուրթով և այլ անոթների բնորոշ բեկորներով թվագրվում է մ.թ.ա. VI-IV դարերով (109, էջ 254):

ԿԱԼ ՔԱՐ բնակավայրը գտնվում է Իջևանի շրջանի Ծաղկավան գյուղից 6կմ հարավ, Հախում գետի ձախ ափին: Այս բնակավայրն ամենամեծն է Օաղկավանի շրջապատում գտնվող ամրոց-բնակավայրերից և գրավում է կենտրոնական տեղ: Կառուցված է բարձր, զառիթափ լանջերով ժայռի վրա, որի պատճառով ամրոցն ստացել է չորս շարք պատերի մեջ առնված եռաստիճան ելուստի ձև: Միջնաբերդի տարածքը 0,3 հա է: Բնակավայրը սփռված է միջնաբերդի արևմտյան պատից դուրս և զբաղեցնում է 0,8 հա տարածություն, շրջափակված 3 մ լայնությամբ պարսպով: Պարսպից արևմուտք տեղադրված են դարավանդները: Միջնաբերդը բնակավայրի հետ հաղորդակցվում է հյուսիսային պատի մեջ կառուցված քարե լայն (2,2մ) աստիճանով: Նման մի աստիճան էլ բնակավայրը կապում է դարավանդների հետ: Բնակավայրի մուտքը հյուսիսային կողմից է, որի պաշտպանության համար նրա առջև կառուցվել է միջանցքների (քարե պարկերի) մի բարդ համակարգ (Աղ. 2, 4): Մշակույթի շերտը պահպանվել է միայն բնակավայրի արևմտյան հատվածում, որը ուսումնասիրվել է հինգ հետախուզահորերի միջոցով: Շինարարական մնացորդներ չեն պահպանվել: Հայտնաբերված խեցեղենը և ներճկված ապարանջանը թույլ են տալիս բնակավայրը վերագրել մ.թ.ա. VI-IV դդ. (109, էջ 75-79):

ՍԵՎ-ԱԵՎ ՔԱՐԵՐԻ ԲԼՈՒՐ: Գտնվում է Հախումի ձախ ափին, Կալ քարից 2 կմ և Օաղկավանից 1,5 կմ հյուսիս: Ամրոցը գրավում է 0,5

հա տարածություն, երեք կողմից ունի կտրուկ, դժվարամատչելի լանջեր և պաշտպանված է միաշար, 3 մետրանոց պատով: Հյուսիս-արևմտյան պատին կից կառուցված է կիսակլոր ելուստավոր կառույց, որն ամրոցին միանում է ոչ լայն մուտքով: Նման կլոր կամ ուղղանկյուն ելուստ-կառույցներ կան և Նորաշեն, Բարձրաբերդ, Թմբադիր և այլ ամրոցներում: Ելուստը պաշտպանում է 4 մետրանոց մուտքը, որն իր դիրքի շնորհիվ հիանալի պաշտպանված է, և թշնամին մուտքով ներխուժելու համար ստիպված պետք է անցներ կիրճի և վերը նշված կլոր կառույցի միջև առաջացած 25 մետրանոց նեղ տարածությամբ, ընկնելով ճակատային և թևային հարվածների տակ: Ամրոցի հարավ-արևելյան մասում գտնվում է 5մ լայնությամբ ելք, որը տանում է Հախումի կիրճ: Այդ ելքը երկու կողմից պաշտպանված է 20 մետրանոց պատերով, որոնք նեղ միջանցք են կազմում: Ամրոցի հարավ-արևելյան մասում դրված հետախուզահորերից ձեռք բերված նյութերով ուսումնասիրվել է բնակավայրի նյութական մշակույթը, որը համահունչ է մյուս ամրոցների նյութերին և թվագրվում է մ.թ.ա. VI-IVդդ. (109, էջ 82):

ՍԵՎ-ՍԵՎ ՔԱՐԵՐԻ ԹԱԽՏ: Գտնվում է Հախումի ձախ ափին, նախորդ բլուրից 1կմ հյուսիս-արևելք: Ամրոցը տեղադրված է անտառով ծածկված 20 մետրանոց ժայռոտ ելուստի վրա, որը բարձրանում է ոչ մեծ սարահարթի կենտրոնում: Ելուստի երեք կողմերը սահմանափակված են բնական հսկայական ժայռաբեկորներով, որոնց արանքում նկատվում են պատերի հատվածներ: Դրանք փակում են ամրոց թափանցելու հնարավոր հատվածները: Հյուսիս-արևմտյան կողմից, որտեղ ելուստը ձուլվում է շրջապատի տեղանքի հետ, ամրոցը շրջապատված է ներս ընկած կլորավուն, միաշար պատով, որի առջև ստեղծված է ելուստաձև քարե պարկ: Այս քարե պարկի կողքից կառուցված է 6մ լայնք ունեցող մուտքը: Այս երկու ամրոցները պաշտպանական մտահղացմամբ և տարածքով (0,5հա) նման են իրար: Ամրոցում հետախուզահորերի միջոցով ձեռք բերված նյութական մշակույթը, որի շերտի թանձրությունը 0,5-0,6 մ է. թվագրվում է մ.թ.ա. VI-IVդդ. (109, էջ 87-89): Այստեղ ապրողների թիվը մեծ չէր, բնակչությունը կազմված էր զինվորներից և նրանց ընտանիքներից:

Այս ամրոցները պահակակետեր և միաժամանակ արոտավայր էին ծառայում, հուշելով, որ համայնքի յուրաքանչյուր հասուն տղամարդ (անասնապահ) զինվոր է:

ԲԱԽՐԻ ԽԱՉ: Գտնվում է Հախումի աջ ափին, կտրուկ ժայռոտ բլրի վրա: Ամրոցը կրկնելով բլրի ուրվագիծը, ունի համարյա 1հա տարածություն և պարփակված է պարիսպով: Մուտքը ունի յուրահատուկ լուծում: Պարսպի արևմտյան պատին զուգահեռ ձգվող երկրորդ պատի միջոցով ստեղծված է միջանցք (երկ. 90մ), որը հաղթահարելուց հետո կարելի է մտնել ամրոց (աղ. 2, 3): Մշակութային շերտը պահպանվել է միայն հյուսիս-արևելյան հատվածում: Պեղումներից ձեռք բերված նյութերը համահունչ են Նորաշենի, Թմբադիրի և մ.թ.ա. VI-IVդդ. մյուս բնակավայրերի նյութերին (109, էջ 91-93):

ԲԵՐԴԱՔԱՐ: Գտնվում է Չինչինից 3կմ արևմուտք, ուղղված դեպի Հախումի կիրճը: Տեղադրված է ընդարձակ, ժայռոտ և կտրուկ լանջերով ելուստի վրա: Պարիսպները բարձրացված են երեք կողմերում: Հյուսիսային պատը ունի չորս որմնահեց: Դրանցից երկուսը պաշտպանում են 3 մետրանոց մուտքը, որի կատարյալ պաշտպանության համար կառուցված են նաև 20մ երկարությամբ երկու քառանկյուն ելուստներ (աղ. 2, 1): Ամրոցը գրավում է 1,5հա տարածություն: Մշակույթը ուսումնասիրվել է երեք հետախուզահորերի միջոցով (109, էջ 91-93): Հայտնաբերված խեցեղենը, երեքնուկաձև շուրթով սափորի բեկորը, երկաթե եռաթև նետասլաքը, երկաթե կացինը, ապակե անոթների բեկորները թույլ են տալիս բնակավայրը թվագրել մ.թ.ա. V-II դդ.:

ՆՈՐԱՇԵՆ: Գտնվում է Շամշադինի շրջանի Նորաշեն գյուղից 5կմ հարավ-արևմուտք: Այն տեղադրված է ժայռոտ բլրի վրա, կրկնելով բլուրի ուրվագիծը: Ունի կրկնակի պարիսպներ՝ հավանաբար ամրոցի շուրջ առաջացած բնակավայրը երկրորդ պարսպով շրջափակելու հետևանքով, երբ ամրոցը սկսել է խաղալ միջնաբերդի դեր: Պարսպի պատերն ունեն մինչև 3մ հաստություն, շարված են մեծածավալ քարերով: Պաշտպանությունը հեշտացնելու նպատակով պատերը շարված են բեկ գծերով: Հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան հատվածներում կառուցված են ուղղանկյուն ելուստներ (20x10 մ և 18x10մ չափերի) դատարկ աշտարակների ձևով, որոնք մուտք ունեն ամրոցից: Բնակավայրն ունի երկու մուտք, որոնք լավ ամրացված են: Արևելյան 4մ լայնությամբ մուտքը ամրոց է մտնում նեղ միջանցքով, որի դիմաց տեղադրված է միջնաբերդի դուռը՝ 3մ - լայնությամբ: Երկրորդ մուտքը գտնվում է շատ կտրուկ լանջի վրա և ծառայել է միայն հետիոտների համար (աղ. 3, 5): Բնակավայրում

պեղվել է 500 քառ. մետր տարածություն: Այստեղ բացված պատերը հնարավորություն չեն տալիս որոշելու շենքերի ճարտարապետական կառուցվածքը և բնույթը (109, էջ 60-70): Նյութական մշակույթի շերտը հարուստ է խեցեղեն, մետաղե և քարե առարկաներով, որոնք սերտորեն կապվում են հյուսիս և հյուսիս-արևելյան մյուս հուշարձանների նյութերի հետ: Սկյութական նետասլաքներով, մ.թ.ա. VI-IVդդ. մշակույթին բնորոշ այլ զենքերով, սափորներով, կարասներով և ընպանակներով բնակավայրը թվագրվում է այդ դարերով (41, էջ 281-290):

ՊԻԼՈՐ-ՊԱՏ: Գտնվում է Շամշադինի շրջանի Նորաշեն գյուղի հարավային ծայրին: Այն ևս Թմրադիր բնակավայրի նման, արհեստական բարձրացրած բլուրի վրա է կառուցված: Բլրի ողջ մակերեսը կառուցապատված է և շրջապատված պարիսպով, որի հարավային կողմում տեղադրված է մուտքը: Շինարարական մնացորդների քննությունը ցույց է տալիս, որ շինություններն ինչպես մյուս ամրոց-բնակավայրերում, կազմված են մի շարք կից սենյակներից, որոնք հենվում են մեկ ընդհանուր պատի: Պատերը շարված են անմշակ ճեղքված քարերից, կավե շաղախով: Սենյակներում պատերին կից հարմարեցված են (1,5-2մ) խորդանոցներ, տարբեր չափերի և ձևերի հորեր (վերին տրամ. 1,3-1,4մ, ստորին տրամ. 1,7-1,0 և 0,7մ խորությամբ): Սենյակներից մեկում, պատին կից, շարված է քարե նստարան նման Թեյշեբաինիի մինչուրարտական բնակավայրում (153, էջ 10, 13), Օշականի ուշ ուրարտական պալատական համալիրում (110, էջ 49) և Արին Բերդի սյունազարդ դահլիճում բացվածներին (173, էջ 80):

Հայտնաբերված նյութական մշակույթը միատարր է, որն ապացույց է հուշարձանի միաշերտության: Այդ մշակույթը կազմված է տարբեր տեսակի կարասներից, սափորներից, պրոֆիլավորված, կլորավուն և ծորակավոր պսակով թասերից և այլն, որոնք զուգահեռներ ունեն ոչ միայն հյուսիս-արևելյան, այլև Հայաստանի մյուս շրջանների հուշարձանների համալիրներում և թույլ են տալիս ամրոցը թվագրել մ.թ.ա. VI-IV դդ.: Բնակավայրում հայտնաբերված մեծ քանակությամբ տարբեր չափերի հորերի, աղորիքների, կոկիչների և հատկապես քարե բրիչի առկայությունը և զենքի բացակայությունը բնորոշում են բնակավայրի երկրագործական բնույթը:

ԿՐԵԽԱՆՑ ԲԼՈՒՐ և ՏԱՎՐԻՊԱՇ: Ամրոցները ևս տեղադրված են արհեստական բլուրների վրա, սակայն ունեն կառուցողական որոշ տարբերություններ: Կրեխանց բլուրը, որը գտնվում է Մոսես գյուղի հյուսիս-արևմտյան ծայրին, Թմադիր և Պիլոր-պատ բնակավայրերի նման հարմարեցված է լեռնոտ տեղանքին: Ձվածև գագաթով բլուր է 102x65մ տարածությամբ, 18-20մ բարձրությամբ և շինարարական ու նյութական մշակույթով նման է մյուս երկուսին: Տավրիպաշը գտնվում է Չորաթան գյուղի Ներքինշեն ձմեռանոցից 1 կմ հյուսիս-արևելք: Կառուցված է ցածր տեղանքում, Խնձորուտ գետի ձախ ափին: Ամրոցը կառուցելու համար շրջապատը բոլորաձև փորել են և հողը կենտրոնացնելով՝ ստեղծել 20 մ բարձրությամբ (150x118մ) ձվաձև գագաթով բլուր, որը պարսպապատվել է և ամբողջապես կառուցապատվել: Փորելուց առաջացած խրամատը երկու ծայրով միացվել է գետին, որի ջրերն այդպիսով բոլորելով բնակավայրը, դարձել է պաշտպանական ջրային գոտի (աղ. 3, 3): Այս երկու ամրոցներից հավաքած խեցեղեն մնացորդների և բլուրների կառուցման առանձնահատկությունների հիման վրա այս ամրոցների գոյությունը ևս վերագրվում է մ.թ.ա. VI-IV դդ. (109, էջ 256):

ՍԱԼՔԱՐ: Գտնվում է Այգեձոր գյուղի հյուսիս-արևելյան ծայրում բարձրացող համանուն բլուրի վրա, որի դեպի գյուղ նայող լանջը թեք է, իսկ մյուս լանջերը՝ խիստ զառիթափ: Բլրի մակերեսին բարձրանում են հսկայական ժայռեր: Այս ժայռերի միջև երևում են ոչ մեծ ուղղանկյուն շինության պատերի հետքեր: Պահպանված են միայն հիմքի քարերը մեկ կամ երկու շարքով: Շինության ներքին տարածքը՝ 2x5մ - չափերով, լեփ լեցուն է եղել մոխրով, ածխի մանր կտորներով և այրված հողով: Պահպանված շերտի խորությունը 0,5 մետր է: Այս միջավայրում հայտնաբերվել են երկու քարե արձանիկների բեկորներ, կոտրված սայրով քարե կացին, փոքրիկ դաշույն, նման Կարմիր բլուրի արձանիկների կրած դաշույններին, որոնք թույլ են տվել այն բնորոշել որպես սրբավայր: Հայտնաբերված խեցեղենի գորշ և բաց վարդագույն բեկորներով սրբավայրը թվագրվում է մ.թ.ա. VI-IVդդ.: Շենքը պաշտպանական կառույցներ չունի: Պահպանությունը ապավինած է եղել դժվարամատչելի, բնակավայրերից հեռու դիրքին և սրբագործված լինելուն: Այսպիսի սրբավայրերն ունեն հնագույն ավանդներ Անդրկովկասում և Հայաստանում (109, էջ 93-95) և ինչպես երևում է, ավանդաբար շարունակվում են նաև քննարկվող ժամանակաշրջանում:

ԲԵՐԴԻ ԳԼՈՒԽԸ տեղադրված է Գավառ քաղաքի համարյա կենտրոնում: Գավառագետի ձախ ափին գտնվող հարթ մակերես ունեցող

մի բարձունք-հրվանդանի վրա: Բարձունքն ունի խիստ կտրուկ, զառիթափ լանջեր և իշխող դիրք շրջապատի նկատմամբ, ուստի բարձունքը բնակեցվել է հնագույն ժամանակներից: Բնակավայրն արևելքից արևմուտք ձգվում է 400մ երկարությամբ և ունի 110մ լայնություն. եղել է պարսպապատված: Ամրոցի ներսով անցնող լայնակի միջնապարիսպն այն բաժանել է արևելյան և արևմտյան հատվածների (աղ. 3, 1): Արևմտյան մասը ունենալով ավելի բարձր դիրք և երեք կողմից լինելով անառիկ, ծառայել է որպես միջնաբերդ, իսկ արևելյան ընդարձակ մասում տարածվել է բնակավայրը (50, էջ 18-19):

Ամրոցում 1927թ. հայտնաբերված Ռուսա I-ի արձանագրությունից պարզվում է, որ ամրոցը հանդիսացել է Ուելիկուխի-Վելիքուխի երկրի ամրոց-բնակավայրերից ամենակարևորը և նվաճվել է ուրարտացիների կողմից:

Պեղումներով պարզվել է, որ բնակավայրն ունի շինարարական երկու շերտ՝ նախուրարտական և ուրարտական, իսկ հնագիտական նյութերը օգնում են պարզելու, որ կյանքն այստեղ շարունակվել է նաև հետուրարտական ժամանակաշրջանում մինչև միջնադար: Նյութերի մեջ առանձնանում է բարձր կողերով գորշավուն ըմպանակի, հարթ կտրած շուրթերով թասերի, կոնք-տաշտի, ալիքաձև և ուղիղ փորագիր ու ուռուցիկ գոտեզարդ կարասների բեկորների մի խումբ, որը կարելի է վերագրել Բերդի գլխի քննարկվող ժամանակաշրջանի մշակույթին:

ՎԱՐԴԱՁՈՐ: Մարտունի շրջանի Վարդաձոր (Ադամխան) գյուղից 2կմ արևելք. Քռա կոչվող ոչ մեծ բարձունքի վրա տարածվում է նույն անունը կրող բնակավայրը, որը բոլոր կողմերից շրջապատված է 4մ լայնությամբ պարիսպներով: Հյուսիսային, հյուսիս-արևմտյան և արևմտյան կողմերից երևում են երկրորդ պարսպի հետքերը: Միջնաբերդը 1 հա տարածությամբ ունի ութ աշտարակ, չորսը արևելյան և հարավ-արևմտյան մուտքերի երկու կողմում, երկուսը՝ արևմտյան, երկուսը՝ հյուսիսային պարսպահատվածների վրա: Բնակավայրը փռված է ամրոցի արևելյան կողմում, մուտքի դիմաց և ամրոցի հետ գրավում է 6 հա տարածություն (աղ. 3, 4): Բնակավայրն ամբողջությամբ կառուցապատված է: Ամրոցը գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից, նվաճվել և վերակառուցվել է ուրարտացիների կողմից: Այդ է վկայում տեղանքից հայտնաբերված Ռուսա I-ի արձանագրությունը: Հնագիտական նյութը, հիմնականում խեցեղենը, ուրարտական է, սակայն առկա են ետուրարտական և ուշ անտիկ ժամանակաշրջանի նյութեր: Բարձր ու ներծկված կողով, թուխ գույնի ըմպանակի, վաղ հայկական խեցեղենի խիստ բնորոշ այլ տեսակների բեկորների առկայությունը հնարավորություն է ընձեռում ասելու, որ կյանքը ամրոցում չի ընդհատվել նաև մ.թ.ա. VI-IVդդ. (50, էջ 31-32; 32, էջ 53):

ԿԱՐՃԱՌԲԵՅՈՒՐ: Տեղադրված է Սևանա լճի հարավային ափին: Տեղանքը բարձրադիր հրվանդանի ձևով մխրճված է եղել լճի մեջ, որը հյուսիսից բնական պատնեշ է ծառայել բնակավայրին: Բնակավայրը շրջափակված է եղել հսկայական ժայռաբեկորներով կառուցված պարիսպներով (հաստ. 2,30մ), որի հարավային հատվածը, տեղանքի հարթ տարածքում պաշտպանությունն իրականացնելու համար, կառուցվել է բեկ գծերի սկզբունքով: Իսկ հյուսիսային կողմից ընթերցվում են աշտարակի հետքեր: Բնակավայրի սիստեմատիկ պեղումները սկսվել են 1975թ.: Բնակավայրի ողջ տարածքը կառուցապատված է բնակելի շենքերով, իրականացված խոշոր և միջին քարերի ու կավե շաղախի լիցքով, երկշար տեխնիկայով: Սենյակներն իրար կից են, հենվում են ընդհանուր պատերին, իսկ իրարից անջատվում են միջանցքներով: Հելենիստական ժամանակաշրջանում այն ենթարկվել է վերակառուցման, մեծ տարածությունները փոքրացնելու միտումով:

Բնակավայրի մ.թ.ա. VI-IVդդ. գոյության մասին են վկայում ստորին շերտում բացված պատերը, «սկյութական» արխայիկ նետասլաքը, և խեցեղենի այն ստվար մասը, որը իր ձևաբանական հարդարման և զարդանախշման տարրերով հանդիսանում է Հայաստանի մ.թ.ա. VI-IV դդ. խեցեղենի անքակտելի մասը (42, էջ 268-277; 128, էջ 523):

* * *

Քննարկվող բնակավայրերը խմբավորվում են գետերի հովիտներում, հողագործության և անասնապահության համար անհրաժեշտ պայմաններ և բնակավայրերի ջրամատակարարումն ապահովելու նպատակով: Արարատյան դաշտավայրում դրանք խմբավորվում են Արաքս և Հրազդան գետերի, Սևանի ավազանի բնակավայրերը՝ Գավառագետի, Ծակքարի և մյուս գետերի ավազաններում: Այս նպատակային խմբավորումը նկատելի է հատկապես հյուսիս-արևելյան շրջաններում, որտեղ առանձնանում են բնակավայրերի մի քանի խումբ՝ Դեբեդ

և Արչիս գետահովիտների բնակավայրերը՝ Քարի գլուխ, Հաղթանակ, Բերդատեղ, Փոքր Շահլամա, իրենց շրջապատող փոքր ամրոցներով, Հախումի բնակավայրերը՝ Կալ-քար, Սև-սև քարերի բլուր, Սև-սև քարերի թախտ, Բախրի խաչ, Բերդաքար և Տավուշ գետահովտի բնակավայրերը՝ Նորաշեն, Պիլոր-պատ, Տավրի-պաշ, Կրեխանց բլուր: Այս խմբերի մեջ ընդգրկված բնակավայրերն իրենց գրաված տարածքով հզորությամբ, ընձեռած նյութական մշակույթով համազոր չեն և յուրաքանչյուր խումբ ունի մեկ կամ երկու կենտրոնական ու դրանց շրջապատող բնակավայրեր և ամրոցներ:

Աշխարհագրական տեսակետից յուրաքանչյուր բնակավայր բլուր կամ բարձունք է, շրջապատի նկատմամբ գերիշխող դիրքով տեղանք, որը պաշտպանված է զառիթափ լանջերով, գետերով, հեղեղատներով և շրջապատում ունեցել է երկրագործության ու անասնապահության զարգացման համար տարածություններ:

Հանդիպում են բնական և արհեստական բարձունք-բլուրների վրա կառուցված բնակավայրեր, որոնց մեջ բնական բարձունքների վրա կառուցված բնակավայրերի թիվը գերակշռող է: Արհեստական բլուրների վրա են կառուցված Մուխաննաթ-Թափա, Թմբադիր, Պիլոր-պատ, Կրեխանց բլուր, Տավրի պաշ բնակավայրերը: Մակայն պետք է նշել հիշյալ բնակավայրերի առաջացման մեջ եղած տարբերությունները: Մուխաննաթ-թափան, օրինակ, պատկանում է «Մոխրաբլուրների» տեսակին, որոնց ծագումը հասկանալի է և բնորոշ հարթավայրերի համար: Այն եզակի չէ: Այդպիսի բնակավայրերից են նաև էջմիածնի շրջանի Մոխրաբլուր և Դվին բնակավայրերը (3, էջ 208-211; 62, էջ 10): Իսկ մյուս չորսը ստեղծվել են նպատակային: Շրջապատում եղած ժայռոտ ցցվածքներից ընտրվել է այն մեկը, որը ունենալով մյուսների առավելությունները՝ լանջերի կտրուկ իջվածք, երկու կամ երեք կողմից գետակների կամ խորխորատների առկայություն, ունեն մի լանջ, որին կից հող կուտակելով՝ ստեղծել են ընդարձակ տարածք և բնակեցրել: Այս բլուրները, ինչպես տեսնում ենք, ստեղծվել են միևնույն մտածելակերպով ու սկզբունքով: Այսպիսին են Պիլոր-պատ, Թմբադիր, Կրեխանց բլուր բնակավայրերի բարձունքները: Դրանցից մի փոքր տարբերվում է Տավրի պաշը, որը, ինչպես նշվեց վերևում, բարձրացված է գետի ափին, ցածր տեղանքում: Այն ամբողջությամբ հողի կուտակում է և նրա պաշտպանությունն իրականացնելու համար, բացի պարսպապատելուց, ջրային պաշտանական գոտի են ստեղծել:

Բնական բարձունքների վրա տեղադրված բնակավայրերի մի մասը զբաղեցնում են բրոնզի կամ երկաթի դարաշրջաններում առաջացած բնակավայրերի վերին շերտերը, ինչպես Քյոսի ճոթերը, Բերդի գլուխը, Վարդաձորը, Հաղթանակը, Կարմիր բերդը, Էրեբունին, Արմավիրը և այլն:

Յուրաքանչյուր բնակավայր մի ինքնուրույն կուռ պաշտպանական միավոր է՝ տեղադրված անմատչելի կետում, շուրջանակի առնված հաստահեղույս պարսպի մեջ: Վաղ հայկական ամրոցաշինությունը ժառանգել է հնագույն ժամանակներից ձեռք բերված ավանդները: Եթե ամրոցների մի մասը շարունակում է ուրարտական պաշտպանական կառույցների սկզբունքները՝ Արմավիր, Էրեբունի, Բերդի գլուխ, Վարդաձոր, ապա մյուս և գերակշռող մասը՝ բրոնզի և երկաթի դարաշրջանների կիկլոպյան ամրոցաշինության սկզբունքները՝ Կարմիր բերդ, Բերդատեղ, Նորաշեն, Աստղի բլուր և այլն: Մակայն բոլորն ունեն մեկ ընդհանրություն՝ կրկնում են տեղանքի ուրվագիծը՝ անկանոն ուղղանկյունաձև, եռանկյունաձև, ձվաձև կամ սեղանաձև: Պարիսպների պատերը, մինչև 3-4 մ հաստությամբ, մեկ կամ մի քանի շարքով փակում են տեղանքի բոլոր մատչելի կողմերը: Տեղանքի թելադրանքով ունեն բազմաթիվ բեկ գծեր, «մեռյալ» տարածությունները պաշտպանելու համար: Ուրարտական ամրոցաշինության բովով անցած Արմավիրը, Էրեբունին, Վարդաձորը ինչպես նաև հյուսիս-արևելյան մի քանի կարևոր բնակավայրեր (Նոյեմբերյանի Բերդատեղը, Թմբադիրը, Նորաշենը) պարսպի վրա ունեն որմնահեցեր: Խնամքի հատուկ առարկա էին բնակավայրը շրջապատի հետ կապող մուտքերը, որոնց պաշտպանության համար մշակվել են հատուկ սկզբունքներ: Մուտքերը տեղադրված են այնպես, որ բնակավայր մտնողը պարսպի մոտով պետք է անցներ իր չպաշտպանված՝ աջ կողով: Վերը հիշատակված որմնահեցերը տեղադրված են մուտքերի երկու կողմերում: Խոշոր՝ հատկապես կենտրոնական բնակավայրերում մուտքերի կողքին, կառուցված են կիսակլոր, ուղղանկյուն կամ քառակուսի ելուստ՝ կառույցներ, որոնք ամրոցից մուտքեր ունեցող սենյակներ են հիշեցնում (Նորաշեն, Քարի գլուխ, Հաղթանակ, Բերդատեղ, Կալ-քար): Այս կառույցները, որ գրականության մեջ ընդունված է կոչել «քարե պարկեր», հայտնի էին ուրարտական ամրոցաշինության ևս՝ Արգիշտիխինիլի, Թեյշեբաինի: Եվ վերջապես, մի շարք ամրոցներ (Կալ-քար, Սև-սև քարերի բլուր, Մև-սև քարերի թախտ, Բախ-

րի խաչ, Բերդաքար) ունեն մուտքերը պաշտպանող երկար միջանցքներ, որոնք առաջացել են պարսպի պատին զուգահեռ ձգվող լրացուցիչ պատով կամ պարսպի պատի և կիրճի միջև ստեղծվող նեղ տարածությամբ: Հետաքրքիր է լուծված հատկապես Բախրի խաչի մուտքի պաշտպանությունը: Երեք մետրանոց անցուղին, արևմտյան պարսպի պատի և նրան զուգահեռ կառուցած պատի միջով անցնելով 90 մ, նոր միայն հյուսիսային կողմից մտնում է ամրոց:

Մ.թ.ա. VI-IV դդ. բնակավայրերը հատակագծային տեսակետից և կառուցվածքով քիչ են տարբերվում նախորդ ժամանակաշրջանի բնակավայրերից, միայն որոշ դեպքերում ունեն ավելի կանոնավոր ուրվագիծ և մասերն ավելի որոշակի են տարբերակված: Պարզ կառուցվածք ունեն փոքր բնակավայրերը և ամրոցները, որոնք պատված են միաշարք պարսպով, լրիվ կառուցապատված են: Մեծ բնակավայրերը, որպես կանոն, ավելի բարդ կառուցվածքներ են: Եթե բնակավայրը զգաղեցնում է բարձունքի ընդարձակ և հարթ տարածքը, պաշտպանական նպատակներով, պարսպից պարիսպ, լայնակի պատերով բաժանված են 2-3 հատվածի և ամենաբարձր դիրք ունեցող հատվածը կատարում է միջնաբերդի դեր: Այդպիսին են Բերդի գլուխ, Քարի գլուխ և Հաղբանակ բնակավայրերը: Եթե բնակավայրը տեղադրված է ժայռոտ գագաթով բարձունքի վրա, գագաթի ամրոցն է իր սեփական պաշտպանական համակարգով միջնաբերդ է ծառայում, իսկ բնակավայրը սփռված է նրա շուրջը (Բերդատեղ, Նորաշեն, Կալքար, Վարդաձոր, Արմավիր, Էրեբունի, Վարդաձոր): Հանդիպում են դարավանդներից կազմված բնակավայրեր, որտեղ յուրաքանչյուր դարավանդ պարսպով անջատված է մյուսներից, իսկ վերին դարավանդում տեղադրված է միջնաբերդը: Այդպիսին է Կալ-քարը, որտեղ դարավանդները հաղորդակցվում են լայն ատիճանների միջոցով:

Բնակավայրերի կառուցվածքների քննությունը թույլ է տալիս հետևել դրանց զարգացման ուղին: Դրանք սկզբնապես դժվարամատչելի և ամուր պաշտպանությամբ ամրոցներ են եղել, որոնք ընդարձակվել են պարսպից դուրս բնակեցված տարածությունը պարսպապատելով և բնակավայրի համար միջնաբերդ դառնալու ուղիով:

Քննարկված բնակավայրերը տարբերակվում են նաև գրաված դիրքի ընտրությամբ: Թեև բոլորի համար բնորոշ է դժվարամատչելի դիրքը, այնուամենայնիվ կարևոր, կենտրոնական բնակավայրերի համար ընտրված են ավելի ընդարձակ, հարթ տարածք ունեցող այնպիսի բարձունքներ, որոնք տնտեսական, մշակութային, պաշտամունքային կյանքը զարգացնելու անհրաժեշտ պայմաններ են ընձեռել: Իսկ ամրոցները, որոնց դերն այս բնակավայրերի պաշտպանությունը, լեռնանցքների, ճանապարհների, լեռնային արոտավայրերի և անասունների հոտերի հսկողությունն էր, տեղադրված են առավել բարձր դիրքերում, անմատչելի գագաթների վրա, որտեղ բնակության համար ընդարձակ տարածք պետք չէ, քանի որ այնտեղ ապրում էին միայն ամրոցը հսկող զինվորհամայնականները, հոտերը պահող հովիվները՝ իրենց ընտանիքներով (109, էջ 213-214):

Խնդրո առարկա բնակավայրերի նյութական մնացորդները ևս հավասար քանակությամբ չեն հայտնաբերվել և տարբերվում են բնույթով թույլ տալով առանձնացնել յուրաքանչյուր բնակավայրի մասնագիտացումը: Եթե մեծ բնակավայրերում առատորեն հայտնաբերվում է խեցեգործական, մետաղամշակության արտադրանք, պաշտամունքի հետ կապված առարկաներ, ապա շարքային բնակավայրերը ընձեռում են առավելապես հողագործական կենցաղը ներկայացնող նյութեր:

Այսպիսով, քննարկված ասպեկտները ընդհանուր հայտարարի բերելով՝ կարելի է տարբերակել մ.թ.ա. VI-IVդդ. բնակավայրերի մի քանի տեսակ: Այսպես, առանձին խմբերի կենտրոն հանդիսացող բնակավայրերը, որոնք ունեն ընդարձակ տարածություն, միջնաբերդ, շուրջը փռված բնակավայր, երբեմն էլ՝ հարևանությամբ տեղադրված դամբարանադաշտ, կառուցապատված են շինություններով, որոնց մեջ առանձնանում են նպատակային նշանակության շենքեր, տալիս են տնտեսական կյանքը լուսաբանող բազմաթիվ և բազմապիսի նյութեր, կարելի է դասել ա վ ա ն ն ե ր ի տեսակին, որոնցից հետագայում կարող էին առաջանալ քաղաքներ: Հայաստանի մ.թ.ա. VI-IVդդ. այդպիսի բնակավայրերի շարքին կարելի է դասել Արմավիրը, Էրեբունին, Աստղի բլուրը, Նորաշենը, Կալ-քարը, Քարի գլուխը, Հաղբանակը, Վարդաձորը, Բերդի գլուխը:: Այս շարքի մեջ Էրեբունին և Արմավիրը Արարատյան դաշտավայրում աշխարհագրական և ստրատեգիական տեսակետից գրավելով բացառիկ ու շահեկան դիրք, ուրարտական ժամանակաշրջանում արդեն անցել էին քաղաքային, վարչական և տնտեսական կենտրոնների փուլով և առաջինը մ.թ.ա. VI-IVդդ. աքեմենյան սատրապության կենտրոն-

ներից մեկն էր, իսկ մյուսը IV դարի վերջում դարձավ վերականգնված Հայկական պետության մայրաքաղաք (207, էջ 94-97):

Ավելի շատ են այս ավան-կենտրոնների շուրջը խմբավորվող փոքր, շարքային բնակավայրերը՝ Պիլոր-պատ, Թմբադիր, Տավրի պաշ, Կրեխանց բլուր, Մուխաննաթ-թափա, Կարմիրբերդ, Բերդաքար, Փոքր Շահլամա, Քյոսի ճոթեր, Ջաղացատեղ և այլն: Երրորդ տեսակը կազմում են ամրոցները՝ Բախրի խաչ, Բուդուրի քար, Սուրբ Սրվանես, Սուրբ Նահատակ, Սև-սև քարերի բլուր, Սև-սև քարերի թախտ և այլն, որոնք պահակակետային, պաշտպանական դեր էին կատարում: Սրանց մեջ պետք է առանձնացնել այն կետերը, որոնք բնակչություն չեն ունեցել, որտեղից շինության հետքեր չեն հայտնաբերվել: Դրանք ժայռեր են, անմատչելի բարձունքներ, որոնց քիչ թե շատ մատչելի հատվածներ են ամրացված:

Բնակավայրերի այս դասակարգման վերաբերյալ տեղեկություններ կարելի է գտնել նաև գրավոր աղբյուրներում: Ս.թ.ա. VI-IVդդ. ավանի ամենավաղ հիշատակությունը պահպանված է Բիհիսթունյան արձանագրությունում՝ Զուզա ավանը: Քսենոֆոնը Անաբազիսում հիշատակում է գյուղեր և սատրապական ապարանքով բնակավայրեր, որոնք հավանաբար ավաններ են եղել: Դրանցից մեկի տների մեծ մասը աշտարակներ ունեին (65, IV, IV, 2), իսկ մյուսը շրջապատված էր բազմաթիվ գյուղերով (65, IV, IV, 7): Խեյրիսոփոսի հասած բնակավայրը պարսպապատ էր (65, IV, IV, 10, 11) և նույնպես շրջապատված էր գյուղերով: Արդյո՞ք սա չի հիշեցնում վերը նշված բնակավայրերի խմբերը՝ կենտրոնական բնակավայրով: Մովսես Խորենացին նշում է Վարդգեսավանի (51, II, 65) մասին: Գյուղերի և ամրոցների մասին ևս տեղեկություններ ենք քաղում նույն աղբյուրներից: Բիհիսթունյան արձանագրության մեջ նշվում են Տիգրա և Ույամա ամրոցները Հայաստանի հարավային կամ հարավ-արևմտյան մասում, Կյուրոպեդիայում և Անաբազիսում խոսվում է գյուղերի և անմատչելի վայրերում ու սահմանային կետերում կառուցված ամրոցների մասին (65, IV, IV, 1; IV, V, 23; 135, III, I, 10; III, II, 24): Հերոդոտը նկարագրելով արքայական ճանապարհը, հիշատակում է ամրոց հարավ-արևմտյան Հայաստանում (44, V, 52): Եվ վերջապես Քսենոփոնը տարոնների երկրում նկարագրում է շինություններից զուրկ մի անմատչելի վայր, ուր ապաստանել էր բնակչությունը, ունեցվածքով և անասուններով (65, VI, VII, 2): Նույն պատկերն է ի հայտ գալիս մինչուրարտական և ուրարտական բնակավայրերն ուսումնասիրելիս: Սրանց մեջ առանձնանում են մեկ կամ մի շարք պարիսպներով ամրացված, կառուցապատված, միջնաբերդով մեծ բնակավայրեր "E Gal aqununi manu", որոնց կենտրոնում տեղադրված են մոնումենտալ շինություններ, դրանց շրջապատող մանր բնակավայրեր "Uru patara" հողագործությամբ և անասնապահությամբ զբաղվող բնակչությամբ, և ամրոցներ, որոնք պաշտպանել են կարևոր բնակավայրեր տանող ելքերն ու մուտքերը (72, էջ 91-92): Հայաստանի բնակավայրերի դասակարգման համար շատ հետաքրքիր են Միջին Ասիայի աքեմենյան բնակավայրերի մասին անտիկ հեղինակների թողած նմանօրինակ հիշատակումները՝ քաղաքներ "πολις", գյուղեր "κωμη", որոնք տարաբաշխվում են ըստ մեծության, ամրություններ "ερυματα" և առանց մշտական բնակչության ժայռեր "πετραι" (186, էջ 126-131):

Քննարկված բնակավայրերի մեջ կան այնպիսիները, որոնց հնագիտական նյութը թույլ է տալիս դրանք անվանելու պաշտամունքային-տաճարային կենտրոններ: Ամենակարևորների՝ Արմավիրի և Էրեբունիի մասին բազմիցս խոսվել է, նշելով դրանց ոչ միայն վարչական, այլև պաշտամունքային կարևոր կենտրոններ լինելը, ուրարտական և հետուրարտական, աքեմենյան ժամանակներում (207, էջ 94; 73, էջ 82-84; 43, էջ 128-158):

Որպես պաշտամունքային-տաճարային բնակավայր են ուրվագծվում նաև Աստղի բլուրը, Բերդատեղը, Սալքարը, իրենց տաճարային շինություններով, տեղում հայտնաբերված պաշտամունքային խեցեղենով, տաճարների մանրանկերտերով և այլ առարկաներով: Բազմաթիվ տաճարային կենտրոններ են հիշատակված հին հայկական աղբյուրներում՝ արևելյան և արևմտյան Եփրատի հովիտներում: Դրանք ինչպես վերը քննարկված կենտրոնները, ամրացված են եղել՝ Անին, Երիզան, Թիլը, Թորդանը, Աշտիշատը, Բագավանը և այլն (176, էջ 8-9, էջ 93-100): Հատկանշական է, որ աղբյուրներում դրանք անվանված են ավան (αωαn), իսկ հունական տառադարձությամբ՝ " κωμοπολις":

Բացի պաշտամունքային կենտրոններից, առկա են և բարձրադիր, անմատչելի վայրերում, ժայռոտ ելուստների վրա տեղադրված սրբավայրեր: Այդպիսին է Նորաշենի ամառային արոտավայրերի մոտ գտնվող Աստղաբերդ պաշտամունքային Հրապարակ-սրբավայրը: Այն գրավում է 10 մ բարձրությամբ, 40 x 25 մ

մակերեսով մի ժայռոտ ելուստի գագաթ: Ելուստի ամենաբարձր մասում հարմարեցված է կիսակլոր հրապարակ (15 x 15 մ), ուր բարձրացել են ժայռի մեջ փորված ութ աստիճաններով: Թե՛ հրապարակը, թե՛ աստիճանները մերկ են, նյութական մշակույթի հետքեր չեն հայտնաբերվել: Ենթադրվում է, որ սրբավայրը օգտագործվել է ամռանը, երբ հովիվներն իրենց հոտերով բարձրացել են ամառանոցները (109, էջ 233): Թերևս այսպիսի սրբավայր է պատկերում Կրեխանց բլուրի շրջապատից հայտմաբերված բրոնզե մակույկատիպ մանրակերտը: Այն ցանկապատված կլոր տարածք է, որի կենտրոնում և առաջամասում բարձրանում են կամարներ: Կամարների կողքերին կանգնած են երկուական խիստ ոճավորված ֆիգուրներ, տարածած ձեռքերով: Գլուխները կլոր են, առանց դիմագծերի ընդգծման: Կանգնած են մեջքը մեջքի: Նրանց ոտքերի մոտ խոյի և այծի պատկերումներ են, հրապարակի կողերից դուրս կախված դիրքով: Ա՛ա աստվածներին կենդանիներ զոհաբերելու ծեսի պատկերում է, իսկ աղոթող ֆիգուրները քրմեր են (աղ. 3, 2): Համանման երկու մանրակերտ հայտնի են Եր.Լալայանի պեղումներով ձեռք բերված նյութերի մեջ, որոնք նույնպես պատկերում են ցանկապատված (պարսպապատված) կլոր տարածություններ, ուղղանկյունաձև դռներով, սրածայր ճակտոններով: Դրանցից մեկի կենտրոնում առկա է զոհասեղան, որը հիշեցնում է Արին բերդի բակի զոհասեղանը: Երկու մանրակերտում էլ պատկերված են դիմակներով (թռչնի և արջի) քրմեր՝ պաշտամունքային ծեսի պահին (108, էջ 205): Պետք է նշել, որ սրբավայրեր բաց երկնքի տակ, բարձրադիր վայրերում, տարածված էին հին աշխարհում, հատկապես աքեմենյան Իրանում՝ Պասարգադ, Նակշի-Ռուստամ (274, էջ 22): Այս սրբավայրերի մասին է կարծես Ատրաբոնի հաղորդումը. «...Պարսիկներն իրենց աստվածներին արձաններ չեն կանգնեցնում, բայց զոհեր են մատուցում բարձրադիր վայրերում...ծեսով սրբագործված վայր էին բերում պսակով զարդարված անասունին, աղոթքներից հետո զոհաբերում...» (193, XV, 13):

Անկախ իրենց տիպերից, բոլոր բնակավայրերի համար բնորոշ է ամբողջ տարածքի լրիվ կառուցապատումը՝ ազատ հատակագծով; Հանդիպում են տարբեր՝ քառանկյուն հատակագծով շենքեր, որոնց մեջ գերակշռում են շարքային՝ կենցաղային նշանակություն ունեցող շինությունները, կազմված մի շարք կից սենյակներից: Դրանք մեծ մասամբ հենվում են մեկ ընդհանուր պատի (Թմբադիր, Պիլոր-պատ, Կարճաղբյուր և այլն): Այս երևույթը թույլ է տալիս ենթադրելու մեկ ընդհանուր ծածկի առկայություն: Բնակավայրերի մեծ մասում, շինությունների հատակները խորացված են հողի մեջ, դրանցում անհրաժեշտ ջերմություն ապահովելու նպատակով (Թմբադիր, Նորաշեն, Կարճաղբյուր, Մուխաննաթ-թափա): Սենյակները հաղորդակցվել են ընդհանուր մուտքերով: Բնակավայրը տաքացնելու համար օգտագործվել են ավանդական թոնիրներ, մշտական և շարժական օջախներ: Սենյակներում, պատերին կից, հանդիպում են խորդանոցներ՝ ամանեղենը և պաշարները առանձնացնելու համար: Հացահատիկը պահելու համար օգտագործվում են պատերին կից փորված, տարբեր ձևերի տնտեսական հորեր: Հանդիպում են պատերին կից հարմարեցված, ծեփած նստարաններ՝ Արին բերդ, Պիլոր-պատ և այլն: Դրանց օգտագործումը փաստագրված է դեռ նախորդ դարաշրջանի բնակավայրերում՝ Թեյշեբաինիի մինչուրարտական բնակավայր, Օշականի ուրարտական համալիր (163, էջ 10, 12; 109, էջ 73), Հասանլուի բնակելի շինություններ (240, էջ 199): Թեև այդպիսի նստարաններ շատ են հանդիպում նաև Պասարագադում և Պերսեպոլսում, պարտադիր չէ դրանք համարել Հայաստան ներմուծված աքեմենյան ճարտարապետությանը բնորոշ տարր:

Բնակավայրերից հայտնաբերված հատուկ նշանակության շինությունների հետքերը բազմազան չեն: Դրանք պալատական և տաճարային տիպի շինություններ են: Պալատական միակ շինությունը Էրեբունիի միջնաբերդում բացված սյունազարդ դահլիճն է հարակից սենյակներով (աղ. 4, 1): Դահլիճը առաջացել է ուրարտական Խալդի աստծո տաճարը վերակառուցելուց հետո, որը ծառայել է որպես հանդիսավոր ընդունելությունների, հավաքների վայր: Ճարտարապետական նման համալիրներ, որոնց կենտրոնը սյունազարդ դահլիճն է, սկսել են կառուցվել մ.թ.ա. VI դարից, ինչպես Բաբելոնում, Շոշում, Էկբատանում, Պասարգադում, Պերսեպոլսում և ըստ երևույթին սատրապական կենտրոններում (201, էջ 64: 57, էջ 99-114): Եվ աքեմենյան ժամանակաշրջանի ճարտարապետական տարածական ձևերում կենտրոնական է դառնում բազմասյունանոց դահլիճը, ի տարբերություն հին արևելյանի, երբ կենտրոնական դերը վերագրվում էր տաճարին: Ինչպես տեսնում ենք, Հայաստանը հետ չի մնում զարգացման ընդհանուր մակարդակից, մանավանդ, որ Հայաստանում նման համալիրների ճարտարապետական յուրացումն արդեն նա-

խապատրաստված էր ուրարտական պալատական համալիրներում սյունակիր դահլիճների առկայությամբ՝ Արգիշտիխինիլի, Ռուսախինիլի, Հասանլու, Ալթին-թեփե (156, էջ 79; 208, էջ 193; 239, էջ 139; 263, էջ 32):

Տաճարային շինությունների մասին տվյալները մի փոքր ավելի շատ են: Դրանք ներկայանում են էրեբունու երկու, Աստղի բլուրի, Բերդատեղի, Սալքարի շինություններով և Աստղի բլուրի երկու մանրակերտերով: Եթե բացառենք էրեբունու կրակի փոքր տաճարը (աղ. 4, 2), որը փաստորեն երեք սենյակից բաղկացած համալիր է, և ինչպես վերը նշվեց, իր ճարտարապետական և շինարարական առանձնահատկություններով եզակի ոչ միայն Հայաստանում, այլև հարևան երկրների ճարտարապետության մեջ, թեև թվում է իր նախատիպը կարող է ունենալ Մակուից ոչ հեռու գտնվող Սանգար գյուղի անձավային եռասենյակ շինությունը (173, էջ 101-102), մյուս շինություններն ունեն ճարտարապետական միևնույն կերպարը և մ.թ.ա. VI-IV դդ. տաճարային ճարտարապետության համար առավել կարևոր նյութեր են ընձեռում: Թվարկած բոլոր հուշարձաններում, տաճարները սկզբունքորեն տեղադրված են բնակավայրերի ամենաբարձր, կենտրոնական տեղում, արևելք-արևմուտք առանցքով, բնակավայրի մուտքի հետ միևնույն գծի վրա: Բոլոր չորս տաճարները և երկու մանրակերտերը ներկայացնում են մեկ սկզբունքով ստեղծված, ուղղանկյուն հատակագծով կառույց (աղ. 4, 3, 4, 5, 6, 7): Դրանց մուտքերը կարճ կողմից են, որը ընկալվում է որպես տաճարի գլխավոր ճակատ: Տաճարների պատերը սովորական շինություններից տարբերվում են իրենց հաստությամբ, զանգվածեղությամբ և չունեն լուսամուտներ: Ցավոք, ոչ մի տաճարային կառույց չի պահպանել ծածկի կառուցվածքը, թեև Սուսիի պեղումների տվյալներից ելնելով, այն վերականգնվում է որպես հարթ տանիք (173, էջ 34): Ընդունելով, որ մյուս տաճարների ծածկերը ևս կարող էին լինել հարթ, կանգ առնենք Աստղի բլուրի մանրակերտերի առանձնահատկությունների վրա: Չնայած մետաղի մանրակերտի խիստ փոքր չափերին, այնուամենայնիվ, ճակատային մասի երկթեքությունից երևում է, որ այն չէր կարող ունենալ հարթ տանիք, իսկ կավե մանրակերտը թույլ է տալիս որոշակի խոսել նրա երկթեքության մասին: Տաճարների մանրակերտեր պատրաստելու ավանդույթը լայն տարածում ուներ Հին Աշխարհում՝ Եգիպտոս, Միջագետք, Փոքր Ասիա, Բալկաններ և այլն: Եվ գիտական գրականության մեջ ընդունված է այդ մանրակերտերի ընձեռած տվյալների հիման վրա վերականգնել տաճարների ճարտարապետական կերպարը: Այսպես՝ Արգոսում՝ Հին Հերայոնի պեղումներից հայտնաբերված տաճարի կավե մանրակերտը դիտվում է որպես Հերայի տաճարի պատկերը, և դրանից կարևոր եզրակացություններ են արվում հունական տաճարի ծագման վերաբերյալ (85, էջ 77): Նման օրինակներ շատ են: Նույն մոտեցումը հանդես բերելով քննարկվող մանրակերտի նկատմամբ, կարելի է պնդել, որ այն արտացոլում է Աստղի բլուրի, Բերդաքարի տաճարների ճարտարապետական պատկերը, և ենթադրել, որ այդ տաճարները ունեցել են երկթեք տանիք, իրականացված, իհարկե, փայտով, քանի որ քննարկվող ժամանակաշրջանի և ոչ մի հուշարձանում մինչև այժմ կղմինդրի հետքեր չեն հայտնաբերվել: Մանրակերտերի վրա նկատվում են առանձնահատկություններ, որոնք ճարտարապետական այդ կառույցների նախնական կերպարի ապացույց են: Նախ, դրանք ունեն բարձր ճակտոններ, ապա տանիքի լանջերը դուրս չեն կախվում, ինչպես հետագա դարաշրջանի շենքերին է բնորոշ, օրինակ հունական տաճարներին: Դրանք հենվում են, կարծես, հորիզոնական դրված հեծանների վրա, ստեղծելով մեծ ձեղնահարկով կամ երկհարկ շինության պատկեր: Սա բացատրվում է միայն երկու տարբեր սկզբնաղբյուրների՝ հարթ և երկթեք տանիքների, հին ու նոր ճարտարապետական տարրերի միահյուսմամբ: Այս հատկանիշները բնորոշ են նորաստեղծ մշակույթներին, որոնք հանդես են գալիս հին հայկական մշակույթի մեջ ևս:

Աստղի բլուրի, ինչպես նաև ավելի վաղ՝ մ.թ.ա. IX դարով թվագրվող Մուսասիրի տաճարի պատկերի հիման վրա կարելի է ենթադրել, որ Հայաստանում հարթ ծածկերի հետ կիրառվել են նաև երկթեք տանիքներ, հավանաբար, միայն հատուկ նշանակության շենքերի համար, և որ Հայաստանն այս հարցում ևս ետ չէր մնում ճարտարապետական ընդհանուր զարգացումից, քանի որ ծածկի երկթեք կառուցվածքի ծագումը և զարգացումը թե՛ Բալկաններում, թե՛ Փոքր Ասիայում, թե՛ Իրանում համընկնում է այդ դարերին (84, էջ 137-138, 110, 111):

Անկախ ծածկի ձևերից, վաղ հայկական տաճարների տարածական սահմաններն ընկալվում են որպես միատարր, ծանր զանգված. կառույցն ազդեցիկ է, տարբերակիչ գիծը խստագույն համաչափությունն է: Այս հատկանիշները մ.թ.ա. VI-IV դարերի տաճարային շինությունները ժառանգել են նախորդ դարաշրջանում հայ-

կական լեռնաշխարհում գոյություն ունեցող տաճարների (Թոփրախ-կալեի, Մուսասիրի, Էրեբունու) ճարտարապետությունից: Իր կառուցվածքային առանձնահատկություններով, հատակագծի պարզությամբ մ.թ.ա. VI-IV դդ. տաճարը հարում է բնակելի տան սխեմային և այդ երկուսի միջև անպայման առկա է ժառանգական կապը: Տաճարը նման է մարդու բնակարանի, նրա տարածությունը ճշգրիտ սահմանազատված է և ծառայում է աստծուն՝ մշտական բնակության համար: Այս տեսակետից քննարկվող տաճարն ավելի մոտ է փոքրասիական, հունական տաճարներին, քան հին արևելյանին:

Վաղ հայկական տաճարն ունի մուտքերի դիմացի պատերին կից կառուցված հարթակ - բարձրություն - բեմ: Դրանք ծառայել են աստծուն բերված նվիրատվությունների համար՝ կատարելով այն դերը, ինչ քրիստոնեական եկեղեցիների բեմերը: Ծիսական արարողությունների համար տաճարների առաջ գոյություն ունեին տարածություն, բակ, որոնք ինչպես երևում է Հրո մեծ տաճարից և Աստղի բլուրի կավե մանրակերտից, ցանկապատված էին: Հրո մեծ տաճարի բակի կենտրոնում դրված ուղղանկյուն խորանարդաձև զոհասեղանի վրա կատարվում էին զոհաբերությունները: Կարծես ֆունկցիաները առանձնացված էին, ինչպես քրիստոնեական եկեղեցում՝ բեմում արարողության մի մաս՝ նվիրատվություններ, բակում՝ հատուկ զոհասեղանի վրա, կենդանիների զոհաբերություն: Այսպիսով, մ.թ.ա. VI-IVդդ. տաճարներն իրենց ճարտարապետական կերպարանքով և ծեսի որոշ տարրերով կարծես լրացնում են մ.թ.ա. IX-VIIդդ. և անտիկ ու վաղ քրիստոնեական տաճարային ճարտարապետության միջև բացակայող օղակը:

Հայաստանի մ.թ.ա. VI-IVդդ. բնակավայրերում, բացի պաշտոնական տաճարային շինություններից, հայտնաբերվել են նաև տնային օջախի պաշտամունքի հետքեր, ինչպիսիք են Թմբադիրի բնակարանների օջախ-աղոթարանները: Դրանք իրենց կառուցվածքով տարբերվում են կենցաղային օջախներից և թոնիրներից, յուրահատուկ սրբարաններ են, ունեն հյուսիսային կողերը կլորացրած ուղղանկյուն տեսք: Հարթակի չափերն են՝ 1,05x0,75մ, եզերված 15-20սմ բարձրությամբ կոպտատաշ կրաքարե սալերով: Հարթակը սվաղված է լավ հասլված կավով, որը թրծվելով՝ ձեռք է բերել վառ կարմիր երանգ: Օջախի առաջ փռված է մեկ այլ ծեփածո հարթակ (1,8x1,0 չափերով և 5սմ ծեփի հաստությամբ), որի վրա կանգնել են սրբարանի կրակը վառելու, նորոգելու համար և գուցե թե կրակի առաջ աղոթելու, հմայական բանաձև ասելու պահին: Կրակարան-սրբարաններից մեկի հարևանությամբ հայտնաբերվել է կրաքարե ցուլի արձանիկ, Աստղի բլուրի մանրակերտի ցանկապատված հարթակի նման մի բեկոր, արտակարգ լավ մշակմամբ: Այս փոքր չափերի կրակարան սրբարանները ձևով հիշեցնում են Դվինի (47, էջ 55), Սարի Թեփեի (172, էջ 44) պաշտամունքային կրակարանները:

Վաղ հայկական բնակավայրերի բոլոր տեսակի շինությունների և պարիսպների կառուցման տեխնիկան նույնն է՝ մանր քարերի և հողի շաղախի լիցքով խոշոր ու միջին կոպտատաշ քարերից երկշար պատեր: Սակայն նկատելի է քարերի ընտրություն: Պետք է նշել, որ շինարարական այս տեխնիկան ժառանգված է ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջաններից: Շինությունների մեծ մասը սալարկված են, եթե ոչ ամբողջությամբ, ապա գոնե մուտքերը և դրանց առաջ տարածվող մասերը: Մյուս դեպքերում հատակները տոփանված են, կամ օգտագործված է տեղանքի հիմնաժայռը՝ փոս մասերը հող լցնելու և տոփանելու միջոցով: Քարը օգտագործվում է նաև սյուների խարիսխների, դռների շեմերի ձևավորման, դռան կրունկների համար: Վերջիններս հուշում են, որ դռները եղել են փայտյա: Այն բնակավայրերում, որոնք ժառանգություն են մնացել ուրարտական ժամանակաշրջանից, բնականաբար, կիրառվել է հում աղյուսը, որը եղել է ուրարտական շենքերի վերնամասերի հիմնական շինանյութը: Հատկապես Արարատյան հարթավայրի բնակավայրերում, շինարարական, քարի սակավության հետևանքով, հում աղյուսի կիրառումը վկայվում է նեոլիթյան ժամանակաշրջաններից մինչև մեր օրերը:

2. Դամբարանադաշտեր և դամբարաններ

ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐԻ դամբարանադաշտը սփռված է ուրարտական Թեյշեբաինի քաղաքի թաղամասերի վերին շերտերում: Այստեղ պեղված դամբարաններից երեքը վերաբերում են քննարկվող ժամանակաշրջանին: Դրանք ձվաձև կամ անկանոն քարարկղներ են, ծածկված սալերով՝ կեղծ թաղի ձևով: Թաղումները կատարված են աջ կամ ձախ կողքի վրա, կուչ եկած դիրքով, գլխով ուղղված հարավ: Դրանցից «Ունևոր ուրարտացու տան» պեղումների ժամանակ բացված դամբարանն իրեր չէր պա-

բունակում: Նույն տեղում բացված երկրորդ դամբարանը պարունակել է ձգված համամասներով, երկկանթանի մի սափոր՝ դրված հանգուցյալի գլխավերևում: Երրորդ դամբարանը ամենապահպանվածն էր և հարուստ ուղեկցող գույքով: Խեցեղենը՝ կազմված հարակից գունազարդ անոթից, վարդագույն միականթ սափորից և գորշավուն բարձր կողերով ըմպանակից, դրված էր դամբարանի հարավային մասում, այսինքն գլխի մոտ: Հանգուցյալը կրել է տարբեր ձևերի մածուկե ուլունքներ, ոսկրե մատանի, ծովախեցուց կախիկներ, բրոնզե ձուլածո ապարանջաններ: Նյութերն իրենց ձևաբանական տվյալներով, համաժամանակյա մյուս հուշարձաններից հայտնի զուգահեռներով՝ Զրառատ, Աթարբեկյան, Իջևան և այլն, թվագրվում են մ.թ.ա. V- IV դարերով (153, էջ 137-148):

ՋՐԱՌԱՏԻ քարարկղը իջեցված էր III հազարամյակի դամբարանաթմբի արևելյան լանջի մեջ: Այն կողմնորոշված էր արևմուտքից արևելք (երկ. 3, 10մ, լայնքը 2,45 մ): Քարարկղի պատերը շարված էին 1,10մ, երկարություն ունեցող սալերից (աղ. 5), իսկ արկղը նստած էր դամբարանաթմբի սալահատակին և ծածկված քարալիցքով: Ննջեցյալների մի մասը թաղված էր յուրատեսակ, բարձր կողերով պատգարակի վրա, որը դրված էր կենտրոնից մի փոքր շեղված դեպի հյուսիսային պատը, իսկ արևմտյան և հարավային պատերի մոտ շարված են եղել խեցանոթները: Թաղումը կոլեկտիվ է, դատելով գանգերից՝ 29 հոգի: Չնայած ոսկորների խիստ խառը վիճակին, պարզվել է, որ թաղումները կատարվել են կուչ եկած վիճակում: Թաղման առարկաները բազմատեսակ են ու բազմաթիվ՝ խեցանոթներ, զենքեր, դանակներ, հարդարանքի առարկաներ և այլն: Մ.թ.ա. VI-IV դդ. մշակութին բնորոշ ձգված սափորների, ըմպանակների, օղակավոր դաստակով դանակների և դաշույնների, սկյութական ուշ տիպի նետասլաքների, ներճկված ապարանջանների և շատ այլ իրերի առկայությունը հնարավորություն է ընձեռում դամբարանը թվագրելու մ.թ.ա. V -IV դարերով (169, էջ 69-53):

ԱԹԱԲԵԿՅԱՆԻ դամբարանադաշտը տարածվում էր Հրազդան գետի աջ և ձախ ափերին: Քննարկվող ժամանակաշրջանին են վերաբերում աջափնյա դամբարանները: Դրանք հինգն են և դաշտում տեղադրված են անկանոն, լավ երևացող արտաքին նշաններով: Դամբարաններում կատարված են մեկական, երկուական, իսկ չորրորդ դամբարանում՝ երեքական թաղում: Թաղումները կատարված են կողքի վրա, կծկված դիրքով: Առավել հետաքրքիր և հարուստ է առաջին դամբարանը: Այն արևելքից արևմուտք ուղղված ուղղանկյուն մեծ խուց է (աղ. 6) շարված անմշակ միջին չափերի քարերով: Թաղումը կոլեկտիվ է (23 մարդ), որտեղ լավ տարբերակված են դամբարանի երեք հիմնական տերերը և նրանցից որոշ հեռավորությամբ թաղված ուղեկցող անձինք: Իրերի մեծ մասը գտնվել են տերերի շրջապատում: Դրանք տարբեր չափերի նիզակներ, նետասլաքներ, դաշույններ, դանակներ, բրոնզե ապարանջաններ են, որոնց մեջ ներճկված օրինակներ, զանազան հուլունքներ, կնիք: Խեցեղենը ներկայացված են մ.թ.ա. VI-IV դարերին բնորոշ երկարավիզ, շեփորաձև պսակով, աղեղնաձև կանթերով սափորներով, փոսիկավոր և հարթ հատակով, կողի ու նստուկի միացման տեղում փոքրիկ ելուստ կանթ ունեցող ըմպանակներով, կլոր, ներս հակված շուրթով թասերով, հարակից անոթով և այլն (166, էջ 31-38):

Աթարբեկյանի նյութերի հետ են կապվում նաև գյուղի արտերում 1957թ. քանդված դամբարաններից հայտնաբերված նյութերի մի փոքրիկ խումբ, կազմված միականթ, շագանակագույն, լավ փայլեցրած արտաքինով, նմանատիպ, բայց գորշավուն սափորից, կճուճից և մեկ ապարանջանից (ՀՊՊԹ գույքահամար 1942/135):

ՄԱԿԱՐԱՇԵՆԻ (Կիրովականի շրջ.) դամբարանադաշտը տեղադրված է համանուն գյուղի հյուսիսային մասում: Դամբարանները կառուցված են տուֆե խոշոր սալերից: Քննարկվող ժամանակաշրջանին վերագրվող դամբարանը ուղղված է հյուսիսից-հարավ: Արևելյան պատ է ծառայել մայր հողի ուղղահայաց կտրվածքը, իսկ մյուս երեք կողերը շարված են սալերով, լայն կողը մեկ, երկար կողերը՝ երկուական սալերով: Դամբարանի խորությունն է 1 մ, ծածկված է եղել երկու մեծ սալով: Դամբարանում թաղվել են վեց մարդ, խիստ կծկված դիրքով, յուրաքանչյուրը շրջապատված իրեն ուղեկցող իրերով: Դամբարանում հայտնաբերված նյութական մշակույթի տեսակներն, իրենց բազմաթիվ զուգահեռներն են գտնում Հայաստանի մ.թ.ա. VI-IV թթ. թվագրվող դամբարանային և բնակավայրային նյութերի մեջ և վերաբերվում են այդ դարերի մշակույթին (154, էջ 287-289, աղ. XXX, XXX):

ԿՈՒՐԹԱՆ: Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղից հարավ, Ստեփանավան-Կուրթան խճուղու երկու կողմերում տարածվում է կրոմլեխների մեջ առած քարարկղներից կազմված դամբարանադաշտ: 1961թ. պեղված կիսա-

քանդ կրոմլեխն իր սակավաթիվ, սակայն բնորոշ նյութերով կացին, լկամի բեկոր, ապարանջաններ, զուգահեռներ ունենալով մ.թ.ա. VI-IV դդ. մյուս հուշարձանների համալիրներում ուսումնասիրողին հնարավորություն են ընձեռում վերագրել այդ դարերին (154, էջ 283-291, աղ. XXIX):

ՂԱՀԱՂԱՆ: 1961թ. Թումանյանի (Ալավերդու) շրջանի Ղաչաղան գյուղի մոտ Հ.Մնացականյանը հայտնաբերել է մի ընդարձակ դամբարանադաշտ, որտեղ թաղումներ են կատարվել II հազարամյակի առաջին կեսերից մինչև I հազարամյակի երկրորդ կեսը (151, էջ 151): Վերջին ժամանակաշրջանին է վերաբերում չորրորդ, լրիվ պահպանված դամբարանը, որը պարունակում է երկաթե նիզակի շեղբ, «սկյութական» ուշ տիպի նետասլաք, բրոնզե զարդեր և խեցեղեն: Դամբարանի քննարկվող դարերով թվագրման կռվան են հանդիսանում սկյութական նետասլաքը և ծգված համամասներով խեցեղենը: Դրանցից բարձր կողերով թասը ներկայացնում է ըմպանակ-փիալաների վաղ, բայց կոպիտ տարատեսակը:

ԱԿՆԵՐ (Որնակ) (Թումանյանի շրջ.).: Դամբարանադաշտը տեղադրված է Դեբեդ գետի աջ ափին, բարձրադիր հարթության վրա, որը հյուսիսից եզերված է գետի զառիթափ ափով, իսկ արևելքից ու արևմուտքից՝ կիրճերով: Հարավային կողմում, որը միանում է տեղանքին, հավանաբար փռված է եղել բնակավայրը: Դամբարանադաշտը կազմված է տարբեր ժամանակներով թվագրվող թաղումներից: Դամբարանի ձևը քարարկղն է, շարված և ծածկված բազալտե մասսիվ սալերով: Դամբարանները կողմնորոշված են հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք: Թաղումները կատարված են կողքի վրա, կծկված վիճակում: Այս դամբարաններից ուսումնասիրվող ժամանակաշրջանին են վերաբերում Ն.Մառի և Եվ.Ս.Թաքաշվիլու պեղումներով ձեռք բերված նյութերի մի մասը, որոնք պահվում են Պետական էրմիտաժում և Հայաստանի Պատմության պետական թանգարանում: Նյութերը բաղկացած են երկաթե կեռ դանակներից, փոքր չափերի նիզակներից, դաշույններից իրենց պատյաններով, ուշ տիպի սկյութական նետասլաքներից, զարդերից: Խեցեղենը՝ հյուսիսային շրջաններին բնորոշ գորշ և կարմրավուն գավաթներ, թասեր, միականթ սափորիկներ, հարակից անոթներ, խիստ բնորոշ է մ.թ.ա. VI-IV դդ. մշակույթին:

ՇԱՄԼՈՒՂ: Թումանյանի շրջանի Շամլուղ գյուղի մոտ, 1939թ. պատահաբար բացվել է շարքային մի դամբարան, շատ բնորոշ առարկաներով՝ երկաթե դանակ, բրոնզե ապարանջաններ, մի կանթանի սափոր, մեծ կոնք-տաշտ, միականթ գավաթ: Այս նյութերն իրենց լայն զուգահեռներն են գտնում ոչ միայն Հայաստանի հյուսիսային շրջանների, այլև Արարատյան աշխարհի հուշարձանների նյութերում, հատկապես կոնքը, որոնք հնարավորություն են տալիս դամբարանը թվագրելու մ.թ.ա. VI-IV դարերով՝:

ՍՅՐՈՒՄ (Նոյեմբերյան): Դամբարանը, որը քանդվել է ճանապարհաշինության ժամանակ, գտնվում է Քարի գլուխ բնակավայրի ստորոտում, որտեղ հավանաբար սփռված է եղել բնակավայրի դամբարանադաշտը: Դամբարանում թաղվողի հետ դրված է եղել սափոր, որը պարունակել է բարձրարվեստ արծանիկների մի մեծ խումբ: Այն կազմված է կենդանիների, գազանների և երկսեռ մարդկանց արծանիկներից: Համալիրի վեց կանացի և երկու զինվորների արծանիկները, իրենց հարդարող տարրերով՝ կանանց վզերի մանյակները, ձեռքում բռնած մ.թ.ա. VI-IV դդ. ձևերը կրկնող սափորները, եղջերանոթները, զինվորների սաղավարտները և վահանները, Նորաշենում և Աստղի բլուրում նման արծանիկների գյուտերով թվագրվում են քննարկվող դարերով: Այդ դարերին են պատկանում նաև կենդանիների արծանիկների մի մասը և շքասեղների երկրորդ խումբը (107, էջ 157-163):

ԲԵՐԴԱՏԵՂ: Նոյեմբերյանի շրջկենտրոնից 2կմ հյուսիս-արևելք տեղադրված համանուն բնակավայրի հարավ-արևելյան լանջին տարածվում է բնակավայրի դամբարանադաշտը: Այն ավերվել է Ֆելզիտի քարհանքի գործունեության հետևանքով և հնարավոր է եղել պեղել միայն տասը դամբարան, որոնցից քննարկվող ժամանակաշրջանին են վերաբերում վեցը, դրանք մինչև 7սմ հաստություն ունեցող սալերից կառուցված քարարկղներ են, որոնց երկարությունները տատանվում են 1,81-1,45մ, լայնությունները `0,42-1,0մ բարձրությունները 0,55 մ-0,75մ միջև: Որոշ դամբարաններ լայնակի դրված սալով բաժանվում են երկու անհավասար մասերի (աղ. 7): Երկար մասում թաղված էր հանգուցյալը, փոքրում՝ հանգուցյալի ոտքերի տակ, տեղադրված էր նրան ուղեկցող խեցեղենը: Դամբարաններից հայտնաբերված նյութերը՝ ծգված իրանով, շեփորաձև պսակով միականթ սափորները, պուլիկները, բլթակավոր ըմպանակաները, զենքերն ու զարդերը իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի հյուսի-

---

* ՀՊՊԹ, գույքահամար 1341-1347:

սային և կենտրոնական շրջանների հուշարձանների մեջ և հանդիսանում են մ.թ.ա. VI - IVդդ. մշակույթի անքակտելի մասը (54, էջ 259-264):

ՋՈՒՋԵՎԱՆ: Դամբարանադաշտը սփռված է Նոյեմբերյանի շրջանի Ջուջևան գյուղի արևելյան ծայրամասում՝ «Միջին մատ» կոչված վայրում: Դամբարանները՝ թվով տասնմեկը, դասավորված են անկանոն: Դրանք քարարկղներ են՝ կողմնորոշված հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք: Թաղումները կատարված են կողքի, կծկված վիճակում: Դամբարանների մի մասը քանդվել են, իսկ պահպանվածների չափերն են՝ երկ. 1,56 - 2,00մ, լայն.՝ 0,80 - 0,86մ: Թաղումները մեկական են կամ զույգ: Պեղումներից պարզվել է նաև, որ դամբարաններից երեքում կատարված է կրկնակի թաղում՝ բրոնզեդարյան դամբարանում իջեցվել է նորը: Ուղեկցող նյութերը կապվում են մյուս հուշարձանների՝ Բերդատեղի, Բերդի, Աթարբեկյանի, Ջրառատի նյութերի հետ: Դրանք բնորոշ սափորներ են, ըմպանակներ, կճուճներ: Ավելի հարուստ են ներկայացված զենքերը և զարդերը՝ նիզակներ, կեռ շեղբով և միաձույլ օղակավոր դաստակով դանակներ, նետասլաքներ, տարբեր նյութերից հուլունքներ, լանջապանակի թերթիկներ, արծաթյա մատանիներ, ապարանջան, մահիկ կրծքազարդ: Այս նյութերի հիման վրա դամբարանները թվագրվում են մ.թ.ա. VI-IV դդ. (53, էջ 69-73): Հավանական է, որ դամբարանադաշտը պատկանում է Ջաղացատեղի վաղ հայկական բնակավայրի բնակչությանը:

Այս նյութերի հետ սերտորեն կապվում են դեռևս 1939թ. պատահականորեն բացված մի դամբարանի նյութերը, որոնք Հայաստանի պատմության պետական թանգարան է հանձնել Սմբատ Տեր-Ավետիսյանը: Նյութերը հիմնականում մետաղյա են՝ փոքր չափերի տերևաձև երկու նիզակ, բրոնզե ապարանջաններ, որոնցից երկուսը ներճկված, մատանիներ և եռաթև խողովակակոթառ «սկյութական» նետասլաք*:

ՈՒԴԿԻՆ ԼԱԳԵՐ (Իջևանի շրջ.): Դիլիջանից 6կմ հյուսիս, Աղստև գետի աջ ափին սփռված այս դամբարանադաշտի պեղումներով ձեռք բերված նյութերի մեջ հնարավոր է եղել առանձնացնել մի խումբ, որը վերաբերում է մ.թ.ա. VI -IVդդ. մշակույթին: Դրանք նախ Ֆ.-Բայերնի հայտնաբերած նյութերի մի փոքր խումբ է՝ կազմված միականթ, երկար, շեփորաձև վզով և եռատերև շուրթով, ոչ մեծ չափերի կարմիր սափորներից, մանյակաձև քունքի օղերից, նման Դիլիջանի, Աստղի բլուրի օրինակներին և կապույտ ապակյա հուլունքներից*:

ԹԵՂՈՒՏ (Իջևան): Ռեղկին լագերից ոչ հեռու, Հաղարծին տանող ճանապարհի ընդարձակման ժամանակ, քանդված դամբարաններից ձեռք է բերվել քննարկվող ժամանակաշրջանի երկաթյա առարկաների մի խումբ՝ կազմված նիզակներից, կլորավուն գլխիկով կամ օղակաձև դաստակներով կեռ դանակներից, դաշույնից, ապարանջանից և ճարմանդից, որոնք կապվում են հյուսիս-արևելյան և Հայաստանի մյուս շրջանների մ.թ.ա. VI-IVդդ. նյութերի հետ (109, էջ 148):

ՋԱՐԽԵՋ (Իջևանի շրջ.): Դիլիջանից 10կմ հեռավորության վրա գտնվող և առաջին հազարամյակի առաջին կեսով թվագրվող այս դամբարանադաշտի, Մուրյեի պեղած նյութերի մեջ հանդիպում են քննարկվող ժամանակաշրջանին վերաբերող նմուշներ, որոնք պահվում են Պետական էրմիտաժի Արևելքի բաժնում*:

Նյութերը միայն խեցեղեն են՝ ձգված իրանով, երկարավուն վզով, շեփորաձև պսակով և աղեղնաձև կանթով սափորներ, երկու ձեռաձեվի, շատ ուշագրավ անոթներ, հարդարված փորագիր, երկրաչափական և կոճակատիպ վերադիր զարդերով, երկկանթ, լայնաշուրթ, երկկոնաձև իրանով պուլիկներ: Խեցու մշակվածությամբ, գույնով և հարդարման այլ առանձնահատկություններով դրանք կարելի է վերագրել մ.թ.ա. VI -IV դարերին:

ԻՋԵՎԱՆ: Դամբարանադաշտը հայտնաբերվել է 1958թվին, շինարարության ժամանակ և ավերվել: Քանդված չորս քարարկղները շարված են եղել անտաշ մանր քարերից, ուղղված հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք: Դամբարանների խորությունը և լայնությունը եղել է 0,7մ, իսկ երկարությունը հնարավոր չի եղել որոշել: Խեցեղեն նմուշները խիստ վնասված են, միայն երեք սափոր է ամբողջական պահպանվել: Մետաղյա իրերի վիճակն ավելի բարվոք է՝ ոչ մեծ չափերի, նեղ եռանկյունաձև շեղբով ու լավ արտահայտված միջնաջիղով նիզակ, երկաթե կեռ շեղբով և օղակաձև դաստակով դանակ, բազմատեսակ բրոնզե զարդեր: Նյութերն իրենց ձևաբանական և տեխնիկական տվյալներով աղերսներ գտնելով Ջրառատի, Կարմիր բլուրի, Աթարբեկյանի, Ջուջևանի, Բերդատեղի

---

* ՅՊՊԹ, գույքահամար 1577-1582:

* էրմիտաժ, Արևելքի բաժին, գույքահամար 1674:

** էրմիտաժ, Արևելքի բաժին, գույքահամար 1773, K 463, K 379:

և մյուս հուշարձանների խեցեղենի մեջ, թվագրվում են մ.թ.ա. VI-IVդդ. (7, էջ 73-82):

ԱՍՏՂԻ ԲԼՈՒՐԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ (Իջևան): Տեղադրված է սարահարթի արևելյան մասում, բնակավայրից ցածր տեղանքում: Բնակավայրի բնակիչները թաղումներ են կատարել իրենց ապրած ողջ ժամանակաշրջանում՝ մ.թ.ա. I հազարամյակի սկզբներից մինչև մ.թ.ա. IV դար: Պեղվել է 26 դամբարան, որոնցից հինգը (թիվ 5, 6, 9, 11, 16) վերագրվում են քննարկվող ժամանակաշրջանին: Դամբարանները քարարկղային են՝ ուղղանկյուն կամ քառակուսի, շարված սալերից և ծածկված նույնատիպ ավելի մեծ սալերով: Դամբարանների կողմնորոշումը միատեսակ չէ՝ հյուսիսից հարավ, արևմուտքից արևելք և այլն: Առարկաների դասավորությունը դամբանախցում ևս միատեսակ չէ՝ մեկ շարված են որևէ պատի տակ, մեկ՝ կենտրոնական մասում: Ուղեկցող նյութերը՝ խեցանոթներ, զենքեր, զարդեր, կրում են պաշտամունքային խորհրդանիշի հետքեր (104, էջ 86-97):

ԵՆՈՔԱՎԱՆ (Իջևան): Աստղի բլուրի ամրոցի դիմաց գտնվող գյուղի հարավ-արևմտյան ծայրամասում, հողային աշխատանքի ժամանակ, քանդվել է դամբարան, որում հայտնաբերվել է չորս բացառիկ մեծ չափերի մանգաղներ և բաց վարդագույն կճուճ: Ուսումնասիրողն այս նյութերը ևս վերագրում է վաղ հայկական մշակույթին (109, էջ 153-154):

ԱՉԱՋՈՒՐ (Իջևան): Մակարավանքից 2կմ - արևմուտք, խրամուղի քանդելու ժամանակ բացվել է վեց քարարկղ՝ շարված կրաքարե սալերից: Դամբարաններն ունեցել են 0,5մ լայնք և 0,7մ խորություն, իսկ երկարությունը վերականգնել չի հաջողվել: Դամբարաններն ուղղված են արևելքից արևմուտք: Հավաքված նյութերը բաղկացած են երկաթե դանակներից, նիզակից և ապարանջաններից: Դանակներից երկուսը կրկնում են օղակաձև, ոլորուն դաստակ ունեցող տեսակները փոքր չափերում, որը հատկանշական է միայն մ.թ.ա. VI-IVդդ. մշակույթին (109, էջ 148-149):

ԲԵՐԴ (Շամշադին): 1968թ. Բերդում շինարարության միջոցին բացվել է երեք դամբարան: Սրանք հավանորեն պատկանել են 300մ - արևմուտք գտնվող Բերդ ամրոցի բնակիչներին: Դամբարանները բացվել են երկրի մակերևույթից 0,7-1,0մ խորության վրա և արտաքին նշաններ չեն ունեցել: Պահպանված տվյալներից ելնելով կարելի է ասել, որ թաղումները հիմնահողային են, ողջ խորությամբ լցված քարե ծածկույթով (աղ. 8): Երեք դամբարաններն էլ տեղադրված են հյուսիս-հարավային գծի վրա, իրարից 5-8մ հեռու: Թաղումները կոլեկտիվ են: Առաջին դամբարանը պարունակում է առավելապես խեցեղեն իրեր՝ տասը ըմպանակ, մեկ գավաթ և սափորներ: Երկրորդ և երրորդ դամբարաններում գտնվել են մետաղյա իրեր՝ տարբեր չափերի և տեսակների նիզակներ, դանակներ, դաշույններ, զրահաթերթիկներ, զարդեր, ապակե, մածուկե և բրոնզե հուլունքներ, զարդարուն քորոցներ: Ըմպանակների, ներճկված ապարանջանների, բնորոշ սափորների, կեռ դաշույնների և մյուս նյութերի առկայությունը թույլ է տալիս դամբարանները հաստատապես թվագրել մ.թ.ա. V-IV դդ. (105, էջ 285-295):

Նորաշեն (Շամշադինի շրջան): Նորաշեն գյուղում, Պիլոր-պատ ամրոցից ոչ շատ հեռու, շինարարության ժամանակ քանդվել են երկու փոքր չափերի քարարկղ: Դամբարաններից հայտնաբերված փոքր չափերի նիզակը, երկու միականթ սափորները, ուղղահայաց ամրացված կանթերով փոքրիկ պուլիկն իրենց ձևերով, արտաքին հարդարումով՝ բաց շագանակագույն քսուկ, հրաշալի փայլեցում, կանթերի վրա վերադիր ելուստներ, իրանի վրա կարճ գծիկներով զարդագոտի, կազմում են մ.թ.ա. VI-IV դդ. մշակույթի անբաժանելի մասը (109, էջ 154):

ԱԶԱՏԱՎԱՆ (Գյոգլու, Շամշադինի շրջան): Ղրղի գյուղի մոտ գտնվող Գյոգլու-Ղալաչա կոչվող կիկլոպյան ամրոցի գրաված բլրի արևմտյան լանջին ճանապարհաշինարարները քանդել են մի մեծ դամբանաթումբ, որի պեղումների ժամանակ բացվել է թաղում՝ դիակիզմամբ: Կավահիմնահողում փորված էր ձվաձև փոս (3,5-4,0մ տրամ.), որի կենտրոնում կար երկրորդ, ավելի փոքր փոսը (1,0 -1,2մ տրամ., աղ. 9): Վերջինս լցված էր մոխրով և ածուխով, որոնց մեջ գտնվել են դիակիզումից մնացած ոսկորներ և մարդկային ատամ: Մեծ փոսը լցված էր խոշոր գետաքարերով, որոնց արանքում տեղադրված են եղել հարյուրից ավելի ամբողջական և կոտրված անոթներ: Մի քանիսի մեջ կային մանր եղջերավոր անասունների ոսկորներ, որոնք այրված չէին: Խեցեղենը հիմնականում տարբեր ձևերի և փոքր չափերի սափորիկներ, բաժակ-գավաթներ, թասեր, կճուճներ են: Մետաղը շատ քիչ է՝ բրոնզե զրահաթերթիկ, մատանի, կան նաև հուլունքներ: Դամբարանի թվագրման կռվան են հանդիսանում սափորները, որոնք ձևով, կանթերի միացման և հարդարման հնարներով նմանվում են Զրառատի, Իջևանի, Բերդի,

Կարմիր վանքի, իսկ չափերով՝ նույնությամբ կրկնում են Ակների սափորներին և հնարավորություն տալիս դամբարանը թվագրելու մ.թ.ա. VI-IV դդ. (100, էջ 229-234):

ԿԱՐՇԱՂԲՅՈՒՐ (Վարդենիս): Դամբարանադաշտը սփռված է անտիկ բնակավայրից հարավ և հարավ-արևելք տարածվող Կլոր դար կոչվող բարձունքի վրա: 1972թ. Հ.Մնացականյանը պեղել էր 9 դամբարան, իսկ 1977-1983թթ. ընթացքում մեր կողմից պեղվել է ևս վեց դամբարան: Պեղված դամբարանների նյութերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դամբարանադաշտում թաղումներ են կատարվել I հազարամյակի սկիզբից մինչև մ.թ.ա. I դարերը: Քննարկվող ժամանակաշրջանին են վերաբերում 1972թ. պեղած 22, 23 և 1977թ. պեղած առաջին դամբարանը: Դամբարանադաշտը կազմված է իրարից 2-5մ հեռավորության վրա, անսիստեմ սփռված տարբեր չափերի կրոմլեխներից և դամբարաններից: Կրոմլեխների կենտրոնում տեղադրված են թաղման ծվածև խցերը, որոնցից մեծերը (երկ. 3,30մ, լայն. 2,10մ), ծածկված են կեղծ թաղով (աղ. 10), իսկ փոքրերը (երկ. 2,05-1,70մ, լայնքը 1,27-0,60մ) հարթ սալերով: Բոլոր դամբարանները կողմնորոշված են հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք: Խցերի պատերը շարված են հսկայական քարաբեկորներից, միայն 1977թ. առաջին դամբարանն է, որ մի փոքր տարբերվում է կառուցվածքով: Ռելիեֆի թելադրանքով այն պայտաձև խուց է, որի հյուսիսային պատը ուղիղ է շարված: Պատերը բարձրացված են միջին չափերի գետաքարերից և թերթաքարերից, շատ կանոնավոր և կոկիկ (աղ. 11): Թաղումները խմբակային են՝ 25-43 մարդ, շատ խիտ: Թաղունները կատարված են կողքի, կծկված դիրքով, սակայն երկրի կողմերի նկատմամբ խառը դիրքորոշմամբ: Հանգուցյալներին ուղեկցող գույքը ևս տեղաբաշխված է անկանոն, ազատ մնացած տեղերում: Թաղման այս խտությունը, անկանոն-խառը դիրքերը, ուղեկցող առարկաների միատիպությունը թույլ չեն տալիս տեսնելու որևէ սոցիալական տարբերություն թաղվողների միջև:

Դամբարաններից ձեռք բերված նյութերը բաղկացած են խեցեղենից, երկաթյա կեռ, ուղիղ կամ օղակավոր դաստակով դանակներից, նիզակներից և բազմաթիվ ու բազմատեսակ զարդերից: Խեցեղենն ունի քննարկվող ժամանակաշրջանին բնորոշ երկակի բնույթ՝ իրար հետ հանդիպում են ուրարտական և տեղական խեցեղենի հատկանիշները կրող նմուշներ, սակայն բոլորը պատրաստված մ.թ.ա. VI-IVդդ. խեցեղենին բնորոշ տեխնիկական հնարներով: Թվագրմանն օգնում են նաև ներծկված ապարանջանների, սկյութական ուշ տիպի նետասլաքների, շիգխերի, արծաթյա և ոսկյա թերթիկ ներդիրավոր ապակյա հուլունքների և այլ առարկաների առկայությունը դամբարաններում (127, էջ 506):

ԱԽԼԱԹՅԱՆ (Սիսիանի շրջան): Ախլաթյան գյուղի մոտ «Դոլայի հանդ» կոչվող բարձունքի վրա տարածվող հնագույն բնակավայրի պեղումների ժամանակ, վերին շերտերում հայտնաբերվել են երկու դամբարան: Դրանցից մեկը քանդված և կողոպտված էր, ինչի հետևանքով շատ քիչ իրեր են պահպանվել: Երկրորդը ամբողջական էր և տվել է հարուստ նյութ: Դամբարանը ուղղանկյուն է (3x1,85x0,9մ) շարված խոշոր քարերով: Դամբարանում թաղումը կատարված է եղել արևմուտքից արևելք: Թաղվողի դիրքը հնարավոր չի եղել որոշել ոսկորների քայքայվածության և խառնված լինելու հետևանքով: Լավ է պահպանվել միայն գանգը, որը թույլ է տալիս ասելու, որ թաղումը անհատական է եղել: Դամբարանում հայտնաբերվել են երկաթյա դանակներ, նիզակներ, խեցեղեն և տարբեր նյութերից պատրաստված զարդեր և հուլունքներ: Դամբարանների թվագրման կռվան են հանդիսանում երկաթե միջին չափերի նիզակը, կեռ դանակը, խեցեղեն անոթները՝ իրենց ծգված իրաններով, կենդանակերպ կանթերով, ծորակավոր թասերը և այլն, որոնք մի կողմից զուգահեռներ են գտնում Արարատյան դաշտավայրի հուշարձանների, մյուս կողմից՝ հարավային Հայաստանի և հյուսիսային Իրանի հուշարձանների համալիրներում և թվագրվում են մ.թ.ա. V-III դդ.*:

ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔ: Հուշարձանը գտնվում է Արարատյան դաշտավայրի ծայր հարավ-արևմուտքում, այժմյան Թազաքենդ (Աստապատ) գյուղից 3,2կմ հեռավորության վրա: Այն գրավում է Արաքսի ափին, հյուսիսից հարավ ձգվող հրվանդանի ողջ տարածքը: Հրվանդանը արևելքից և արևմուտքից սահմանափակված է հեղեղատներով ու կիրճերով, հյուսիսից աստիճանաբար բարձրանում է դեպի լեռները: Դամբարանադաշտի վրա ժամանակին կառուցվել են հին Աստապատ գյուղը մի քանի մեծարժեք հուշարձաններով (Ս.Վարդան վանքը, Ա.Հովհաննեսի մենաստանը, Աբասապատ

---

* ՀՀՊԹ գույքահամար 2523: Տվյալները բերված են Մ. Հասրաթյանի օրագրից, հեղինակի սիրալիր թույլտվությամբ, որի համար հայտնում ենք մեր երախտագիտությունը:

ամրոցը), որոնց մեջ առանձին դեր է խաղացել Կարմիր վանքը իր բազմապիսի կառույցներով, դպրոցներով, ձիթհանով, ջրաղացող և այլն (2, էջ 276):

Այս վանքի պարիսպներից ներս, 1895թ. շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է դամբարանադաշտը, որտեղ տարբեր տարիներին պեղումներ են կատարել մի շարք գիտնականներ: Դամբարանադաշտի պեղումներով և երկաթգծի կառուցման ժամանակ քանդված դամբարաններից ձեռք բերված նյութի ուսումնասիրությունից պարզվել է, որ այստեղ թաղումներ սկսել են կատարել դեռևս մ.թ.ա. II հազարամյակից սկսած (161, էջ 235; 162, էջ 326): Դամբարանադաշտը կազմված է եղել ճեղքված քարերից շարված, բարձր կողային պատերով, մեծ չափերի քարարկղ-խուցերից, ծածկված մեծ սալերով, որտեղ կատարված են կոլեկտիվ թաղումներ և ոչ մեծ ձվաձև շարված դամբարաններից, լցված քարերով, որտեղ թաղված են եղել 2-3 մարդ, հյուսիսից հարավ կողմնորոշմամբ (142, էջ 48): Երկու տեսակի դամբարաններում էլ թաղումը կատարված է կողքի վրա, կծկված դիրքով: Քարարկղներում հանդիպում են կրկնակի թաղման հետքեր:

Քարարկղային դամբարանների նյութերի քննարկման, ուսումնասիրման ժամանակ, դեռևս 1941թ., Բ.Ա.Կուֆտինը առանձնացրել էր ուշ ժամանակաշրջանի նյութեր՝ կազմված աղեղնաձև կանթով սափորներից, գավաթներից, ունկավոր թասերից, շեղ ամրացված ծորակներով կճուճատիպ անոթներից, որոնց հարդարման, գունազարդման որակը խիստ տարբերվում է միջին բրոնզի երկու շրջանների խեցեղենից՝ Կըզլվանք 1, Կըզլվանք 1 bis (136, էջ 9, նկ. 1ա): Նույն ձևով ուշ թվագրվող մի խումբ էլ առանձնանում է մետաղյա նյութերի մեջ (60, էջ 66): Այս նյութերին են ավելանում Ա.Լալայանի պեղած փոքր դամբարանների նյութերը, կազմված նույնատիպ ձգված կարմիր, գունազարդ սափորներից, ունկավոր թասից, քթիկավոր թեյնիկից և այլն: Այս դամբարաններն իրենց կառուցվածքով և խեցեղենի ձևերով նման են Ազատավանի, Որնակի, Ջրառատի, Ջարխեջի նյութերին և թվագրվում են մ.թ.ա. VI-IV դարերով:

* * *

Քննությունից պարզվում է, որ մ.թ.ա. VI-IVդդ. դամբարանները հայտնաբերվում են թե՛ առանձին, թե՛ ամբողջ դամբարանադաշտերով: Դամբարանադաշտերից մի քանիսն առաջացել են դեռևս բրոնզի կամ երկաթի դարաշրջաններում, որտեղ շարունակել են թաղումներ կատարել նաև քննարկվող ժամանակաշրջանում: Այդպիսիք են Կարճաղբյուրի, Կարմիր վանքի, Աստղի բլուրի, Բերդատեղի, Ջուջևանի, Որնակի, Ջարխեջի և այլ դամբարանադաշտերը: Բայց կան դեպքեր, որ քննարկվող դարաշրջանի թաղումը կատարվել է, իջեցվել է բրոնզի դարաշրջանի դամբանաթմբի (Ջրառատ) կամ դամբարանի մեջ (Բերդատեղ, Ջուջևան, Կարճաղբյուր, Կարմիր վանք):

Թեև քննարկվող դամբարաններից ոչ բոլորն են պահպանել իրենց կառուցվածքային ձևը (Ղաչաղան, Շամլուղ, Այրում, Թեղուտ, Ենոքավան) Հայաստանի մ.թ.ա. VI-IVդդ. դամբարանային կառուցվածքների մեջ նկատվում է բազմազանություն՝ տարբեր չափերի ուղղանկյուն և ձվաձև քարարկղեր, սալարկղեր, ուղղանկյուն ու ձվաձև խուցեր և հիմնահողային դամբարաններ:

Քարարկղերը հանդիպում են ուղղանկյուն և ձվաձև, մեծ ու փոքր խուցերի ձևով: Մեծերը ծածկված են հսկա սալերով, կեղծ թաղի սկզբունքով: Սրանք բրոնզի և երկաթի դարաշրջաններից եկող ավանդական կառույցներ են և, որպես կանոն, պարունակում են կոլեկտիվ թաղումներ՝ Աթարբեկյան (թիվ 1), Որնակ, Կարմիր վանք, Կուրթան, Ջուջևան, Ախլաթյան: Փոքր չափերի քարարկղերը՝ անհատական և զույգ թաղումներով (Իջևան, Բերդատեղ, Թեղուտ, Նորաշեն, Աթարբեկյան, Կարճաղբյուր, Կարմիր վանք, Կարմիր բլուր) ծածկված են կեղծ թաղով կամ քարահողային լիցքով: Դամբարանի այս կառուցվածքը լայն տարածում է ստանում հելենիստական դարաշրջանում՝ Գառնի, Կարճաղբյուր, Դվին և այլն: Սալարկղները կողի վրա դրված սալերով շարված քառակուսի և ուղղանկյուն արկղներ են, որոնց ծածկն ու պատերը իրականացված են նեղ կողմերից մեկ կամ երկու, լայն կողմերից՝ չորս և ավելի սալերից՝ Մակարաշեն, Ջրառատ, Աստղի բլուր, Բերդատեղ և այլն: Բերդատեղի դամբարանադաշտում հանդիպում են սալարկղեր, որոնք ունեն մի յուրահատկություն: Ուղղանկյուն, բավական երկար (երկ. 1,81մ) սալարկղը լայնակի դրված սալով բաժանված է երկու անհավասար (1,30մ և 0,45մ) մասերի: Երկար մասում կատարված է թաղումը, իսկ փոքրում՝ ննջեցյալի ոտքերի տակ, դրված են ուղեկցող խեցանոթները: Նման երևույթ նկատվել է նաև Շիրակավանի, Կողբի (Նոյեմբերյանի) դամբարանադաշտերում: Հաջորդը՝ ձվաձև շարված-

քով կառույցներ են, որոնք իրենց հերթին, քարարկղերի նմանությամբ, ունեն երկու տարատեսակ: Առաջինը Կարճաղբյուրի դամբարանադաշտին բնորոշ տարբեր չափերի ձվածև խուցերն են: Մեծ չափերինը (դամբ. 22, 23) ծածկված են կեղծ թաղի սկզբունքով, իսկ փոքր չափերի խուցերը՝ սալերով: Որպես կանոն, այս խուցերում կատարված են կոլեկտիվ թաղումներ: Ձվածև կառուցվածքի մյուս ձևը, անհատական կամ զույգ թաղում պարունակող, ոչ մեծ դամբարաններ են, ձվածև շարված քարերով, որոնք ծածկված են կեղծ թաղով կամ լցված քարերով և հողով: Այդպիսին են Կարմիր վանքի և Կարմիր բլուրի դամբարանները: Դամբարանների այս կառուցվածքը լայնորեն տարածում է ստանում հելենիստական դարաշրջանում՝ Կարճաղբյուր, Գառնի և այլն: Գառնիում այն հանդիպում է կարասային, հիմնահողային տեսակների հետ և նույնիսկ կարծես գերիշխում է մյուսների նկատմամբ: Հիմնահողային դամբարանները վերջին տեսակն են: Դրանցում թաղումը կատարված է երկրի մակերեսից 0,7-1,0մ խորության մեջ բացվող ձվածև կամ ուղղանկյուն, առանց բարդ մանրամասներ ունեցող փոսերում: Ուղղանկյուն են Բերդի դամբարանները, որոնք արտաքին նշաններ չունեին կամ կորցրել էին: Թաղումը կատարված է մայր հողի մեջ և ծածկվել է քարերի լիցքով: Ձվածև է Ազատավանի դամբարանը: Այն կազմված է համակենտրոն երկու փոս-խցերից և կրկին ծածկված լիցք քարերով և բարձրացված մինչև դամբարանաթմբի (կուրգանի): Հիմնահողային թաղումները ևս ունեն հին ավանդական ակունքներ և հայտնի են վաղ բրոնզից մինչև մ.թ.ա. VII-VI դարեր՝ Էլառ, Թազաքենդ, Լենինական, Տոլորս, Բասարգեչար, Լոռի (25, էջ 39 և հաջորդ; 48, էջ 19, 97, էջ 183): Սակայն պետք է նշել մ.թ.ա. VI-IVդդ. հիմնահողային դամբարանների կառույցների տարբերությունները վաղ դամբարանների կառույցներից: Վաղ դամբարանները ծածկված են փայտե կամ սալե ծածկով, որը հենվում է կա՛մ կտրված հողափոսի եզրերին, կա՛մ եզրերով շարված քարերի վրա: Իսկ վաղ հայկական դամբարանները, ինչպես նշվեց, ծածկված են հողե և քարե լիցքով: Հիմնահողային դամբարանների երկու տեսակներն էլ հանդիպում են նաև հելենիստական դարաշրջանի հուշարձաններում՝ Գառնի, Արտաշատ (215, էջ 18; 31, էջ 59-61):

Որոշ դամբարանադաշտերում պահպանվել է նաև կրոմլեխների՝ քարե օղակ-ցանկապատերի կիրառությունը՝ Կուրթան, Կարճաղբյուր, Որնակ: Եվ ինչպես երևում է վերջին տարիների ուսումնասիրություններից, հնուց ի վեր ծագած այդ սովորությունը, անընդմեջ շարունակաբար կիրառվելով հասել է մ.թ.ա. VI-IVդդ. և անցել մինչև ուշ հելենիստական դարաշրջանի թաղումներին՝ Օշական, Այգեշատ (էջմիածնի շրջան) (110, էջ 28; 14, էջ 265): Իսկ Օշականում մի դեպքում նույնիսկ կրոմլեխի մեջ է առնված կարասային թաղումը:

Կրոմլեխ-ցանկապատերի մասին կան տարբեր կարծիքներ: Մի դեպքում դրանք կապում են լուսատուների տիեզերական կերպարների և դրանց խորհրդանիշների, արևի պաշտամունքի հետ, մյուս դեպքում կապում են «արգելվող շրջանի տաբուի», այսինքն դամբարանների և թաղվողների անձեռնմխելիության գաղափարի հետ (145, էջ 135-136): Թվում է, քննարկվող ժամանակաշրջանի և նույնիսկ ավելի վաղ՝ երկաթի դարաշրջանի համար, երբ կրոմլեխների կիրառության փաստերը ամենից շատ են, ավելի ընդունելի է երկրորդ՝ դամբարանների ու թաղվողների անձեռնմխելիության գաղափարը: Եվ շատ տեղին է Ռիգվեդայում հանդիպող հատվածը, ուր ասվում է, թե ես բարձրացնում եմ այս օղակը (քարերից) կենդանի մնացածներից պաշտպանվելու համար, որպեսզի նրանցից ոչ մեկը չկարողանա հասնել այս սահմանին (188, X , 18, 4):

Այսպիսով, ինչպես երևում է քննությունից, մ.թ.ա. VI-IVդդ. դամբարանային կառույցները չնչին տարբերություններով շարունակում են նախորդ դարաշրջանի ավանդաբար ժառանգած տեսակները:

Քննարկված դամբարաններում թաղման հիմնական և գլխավոր ձևը դիաթաղումն է: Միայն մեկ դեպքում՝ Ազատավանում է հանդիպում թաղման դիակիզման ձևը: Թաղումները կատարված են մայր հողի վրա և երբեք չեն հանդիպում գետնի որևէ տեսակի ծածկոցների հետքեր, կարծես ընդգծելով մայր հողին մերձեցնելու, սերտորեն միաձուլելու գաղափարը, հակառակ Դ.Մ.Ռոբինսոնի և Ա.Վուլիի կողմից ընդունված այն կարծիքի, որ կարասային թաղումներն արվում էին հողից դիակը լրիվ մեկուսացնելու համար, մայր հողի սրբազանությունը, մաքրությունը չպղծելու նպատակով (265, էջ 130-131; 86, էջ 54-55): Բացառություն են կազմում Ջրառատի թաղումները, որոնք կատարված են թաղման պատգարակի վրա: Նման պատգարակի օգտագործման ավանդը նույնապես գալիս է հնագույն ժամանակներից և հանդիպում է միջին բրոնզի դարաշրջանից սկսած: Թաղման պատգարակներ գտնվել են Արթիկի, Ռեղկին լագերի, Բասարգեչարի, Լճաշենի (168,

էջ 145: 167, էջ 39-40), Հայրիվանքի դամբարաններում: Զրառատի պատգարակը տիպաբանորեն և ժամանակագրորեն մոտ է Բասարգեչարի հիմնահողային դամբարանում հայտնաբերվածին: Դրանք փայտյա հատակով, բարձր կողերով, սայլերի նմանվող պատգարակներ են:

Թաղման հիմնական և գերակշռող դիրքը կողքի վրա պառկած, ոտքերը և ձեռքերը կծկված վիճակն է: Միայն Աթարբեկյանի առաջին դամբարանում է հանդիպում հիմնական թաղվածներին ուղեկցող 20 ննջեցյալների թաղում նստած դիրքով: Կծկված դիրքը, թեև ոչ մասսայաբար, հանդիպում է թե՛ մինչև մ.թ.ա. VI-IVդդ., թե՛ դրանից հետո՝ հատկապես Գառնիում: Թաղումները լինում են թե՛ աջ, թե՛ ձախ կողքի վրա, սակայն ձախ կողքի թաղումները ավելի շատ են: Միատեսակ չէ ննջեցյալների դիրքորոշումը երկրի կողմերի նկատմամբ: Այն չի սահմանափակված միասնական և պարտադրող կողմնորոշմամբ: Ննջեցյալները գլխով ուղղված են լինում երկրի բոլոր չորս կողմերը, սակայն թվական անալիզը ցույց է տալիս, որ որոշ նախապատվություն կա արևելքից արևմուտք կողմնորոշմանը, քանի որ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք կողմնորոշումը սովորաբար համարվում է շեղում՝ կապված թե տարվա որ ժամանակահատվածում է կատարվել թաղումը: Իսկ ննջեցյալի դիրքը որոշվում էր ըստ արևի (212, էջ 17): Հինգ հուշարձաններում (Կարմիր բլուր, Կարմիր վանք, Բերդ, Մակարաշեն, Աստղի բլուրի մի քանի թաղումներ) կողմնորոշումը հյուսիսից հարավ է, գլուխները դեպի հարավ: Քննությունից երևում է, որ տարբեր շրջանների համար կողմնորոշման որևէ նախընտրություն չի նկատվում: Նույնիսկ մեկ դամբարանադաշտում հանդիպում է խառը կողմնորոշում: Այս նույն երևույթը նկատվում է նաև նախորդ դարաշրջանների՝ Որնակ, Լալվար, Գոլովինո, Լոռի և այլ դամբարանադաշտերում: Խառը կողմնորոշում է տիրում նաև հելլենիստական դամբարանադաշտերում: Թաղման դիրքի մասին այս պատկերացումները շարունակվել են մինչև քրիստոնեության ընդունումը, որից հետո ննջեցյալների կողմնորոշումը դառնում է միատեսակ և կանոնիկ: Ննջեցյալների կծկված դիրքը և խառը կողմնորոշումը բնորոշ է նաև Հայաստանի հարևան երկրների համար (134, էջ 245-255; 131, էջ 42-43): Թաղման կծկված դիրքը համապատասխանում է որոշակի պաշտամունքային պատկերացումների հետ, ըստ որի մարդը կյանքից պետք է հեռանա այն դիրքով, ինչ դիրքով որ սաղմնային վիճակում է լինում: Դիակի թաղումով դամբարաններում հանդիպում են անհատական, ընտանեկան՝ զույգ, երեք և կոլեկտիվ թաղումներ: Առաջին երկուսը հանդիպում են փոքր դամբարաններում, իսկ կոլեկտիվ թաղումները կատարված են քառակուսի և ձվաձև մեծ խցերում: Կոլեկտիվ թաղման սովորույթը ևս մ.թ.ա. VI-IVդդ. մշակույթը ժառանգել է բրոնզի և երկաթի դարաշրջաններից: Սակայն այդ թաղումներում նկատվում են որոշակի տարբերություններ: Եթե Զրառատի և Մակարաշենի դամբարաններում նկատվում է թաղումների որոշակի խմբավորում և ուղեկցող առարկաների որոշակի դասավորում նրանց շուրջը, ապա կարելի է ենթադրել, որ այդպիսի դամբարաններում կատարվել է մեկ ընտանիքի կամ տոհմի անդամների թաղում, եթե Աթարբեկյանի առաջին դամբարանում առանձնանում են դամբարանի հիմնական տերերի և նրանց ուղեկցող անձանց կմախքները՝ թույլ տալով տեսնել այստեղ սոցիալական որոշակի տարանջատում, ապա Կարճաղբյուրի կոլեկտիվ թաղումները, ըստ դիրքերի, իրավիճակի, թաղվածների թվի համեմատ ուղեկցող առարկաների համեմատական սակավության, թույլ են տալիս մտածել ինչ որ աղետի կամ մասսայական ոչնչացման հետևանքով կատարված կոլեկտիվ թաղումների մասին:

Ինչպես նշվեց, դիակիզմամբ թաղում քննարկվող ժամանակաշրջանում, մինչև այժմ հայտնաբերվել է մեկ անգամ՝ Ազատավանի հիմնահողային դամբարանում: Դիակիզումը լրիվ է: Հայաստանում դիակիզմամբ թաղումներ արձանագրվում են վաղ բրոնզի դարաշրջանից մինչև մ.թ. առաջին դարեր: Ըստ որում կիզման ծեսը չի կապվում դամբարանների կառուցվածքների այս կամ այն ձևի հետ: Այն հանդիպում է և հիմնահողային՝ Էլառ (19, էջ 94) և քարարկղային՝ Օովակ (18, էջ 166-173, 175 և հաջորդ) և կարասային ու աճյունաանոթներով թաղումներում, ինչպես ուրարտական և հելլենիստական դարաշրջաններում (137, էջ 4; 215, էջ 19; 31, էջ 57-61): Քննարկվող Ազատավանի թաղումը կառուցվածքով ու ծեսով, կարծես թե իր նախատիպն ունի Էլառի դիակիզմամբ թաղումների մեջ, որոնք նույնպես կազմված են երկու համակենտրոն շրջան-փոսերից, և ունի իր հաջորդը Արտաշատի դամբարանադաշտում (31, էջ 59-60):

Մ.թ.ա. VI-IVդդ. քննարկվող դամբարանների թաղումներն ուղեկցող ծեսերի, արարողությունների վերաբերյալ փաստեր քիչ ունենք: Սակայն այդ ժամանակաշրջանին նախորդող և

հաջորդ դարաշրջաններից հայտնի են թաղումներին ուղեկցող կենդանիների զոհաբերությունների, կրակով ապահովելու, հոգեհացի և այլ արարողությունների հետքերը և բնականաբար այդ բոլորը պետք է պահպանված լինեին քննարկվող ժամանակաշրջանում: Այսպես, որոշ դամբարաններում հայտնաբերված մանր ու խոշոր անասունների ոսկորները խոսում են ննջեցյալին այն աշխարհում սնունդով ապահովելու մասին (Ազատավան): Կարճաղբյուրի 1977թ. պեղած դամբարանի ծածկի սալերի վրա, հումուսահողի տակ հայտնաբերված խեցեղենի բեկորները, ածխի կտորները, մոխրի հետքերը, անասունների ոսկորները և հատկապես ձիու գանգի (թեև ոչ լրիվ պահպանված) առկայությունը խոսում են թաղումից հետո գերեզմանի վրա հոգեհացի, զոհաբերության, հանգուցյալին կրակով ապահովելու (ծիսական խարույկ) արարողությունների կատարման մասին: Վերջին արարողության առկայության փաստ են նաև Կարճաղբյուրի N 23 դամբարանից հայտնաբերված ճրագները, որոնք պետք է լուսավորեին ննջեցյալների ուղին, լուսավորեին և ջերմացնեին նրանց հոգին:

Այսպիսով, դամբարանների քննությունից պարզվում է, որ թաղման կառույցները, ծեսերը, արարողությունները ողջ երկրում միատեսակ և միասնական են և թույլ են տալիս խոսելու դրանց գաղափարական հիմքի ընդհանրության մասին: Մ.թ.ա. VI-IVդդ. բոլոր՝ թաղումներն ուղեկցվում են թաղման գույքով: Չնայած դամբարանների կառուցվածքների և թաղման ձևերի տարբերություններին, բոլորն էլ ունեն իրերի համալիր՝ խեցեղեն, զենք, զարդեր և այլն:

Մ.թ.ա. VI-IVդդ. դամբարանների մեծ մասում բնորոշ է նաև զենքի առատ առկայությունը: Սա թերևս ապացուցում է, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանի բնակչությունը գտնվում էր սոցիալ-տնտեսական զարգացման այն աստիճանում, երբ հասարակության յուրաքանչյուր անհատ ռազմիկ է, և ժողովուրդն ու զորքը կազմում են մեկ ամբողջություն:

Թաղման գույքը տեղական արտադրություն է, աչքի է ընկնում յուրաքանչյուր շրջանի և ողջ տարածքի համար բնորոշ միանման տեսականիով, զենքերի, գործիքների, զարդերի, խեցեղենի միօրինակությամբ, որն էլ թույլ է տալիս խոսելու ոչ միայն ներքին ընդհանուր շուկայի, այլև տեղական արտադրական կենտրոնների առկայության մասին: